



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



N 1650
N 1209

70

VV²-

25 NOV 2010

ETOS RATA 401.

№ 65

Հայաստակաբիւն Ազգիւ-Տարածի

№ 65

891.11

ԱՐՑՐԵՍԴՐՈՒ

Ա-78

ԻՇԽԱՆ Ա. ՍՄԲԱՏՅԱՎ


ԿՐ

ԴԱԻԱԾԱՆՈՒԹԻՒՆ

Դրամատիկական լեզենդա Վրաստաճի անցեալից.

1002
6039

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



Բնագրից բարձրացեց

ԶԱԼԱԼ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

(Արտապահ ՏԵՐԱԶԻՑ)



ԹԻՖԼԻՍ 1904.

Տպարան „ՃԵՐՄԻՍ“, Միթայէլեան փող., 81.

(7)

6 АВГ 2013

№ 25

13555

20

ФОНДЫ И СБОРЫ УНИВЕРСИТЕТА

20

МОСКОВСКАЯ ГИБРИДА

87

САДОВОЙ МОСКОВСКОЙ

СИМВОЛЫ ВЪВ ВЪДУВЪ

РУССКОГО ПРОФЕССИОНАЛА

Дозволено ценз. 25 Февраля 1904 г. Тифлисъ.

ЧИСЛЕННОСТЬ ГИБРИДОВЪ

САДОВОЙ МОСКОВСКОЙ

САДОВОЙ МОСКОВСКОЙ

САДОВОЙ МОСКОВСКОЙ

САДОВОЙ МОСКОВСКОЙ

(1)

Библиотека РГБ
Учебник по физике
Джон Уильям Годфри

1904 год. 12

Чтение

Ф. И. С. О. С. Н. О. К. Р. И. К.

Физика и химия в Китае

Любовь

Գ Օ Բ Ռ Ո Պ, Ա Ն Զ Ի Ն Ք

Սուլեյմանի-խան-շահի արարտկան թիկնապահ զօրաբաժնի հրամանառարր և նրա տեղակալը Վրաստանում:

Զէյնար-մօտ 40 տարեկան, նրա զլխաւոր կինը, Վրաստանի վերջին թագաւոր Թէլմուրաղի այրին:

Օսմանյա-մօտ 25 տարեկան, Սուլեյմանի տարփառչին:

Բասախար- Զէյնարի դաւեակը, Անանիա Գլախալի կինը:

Օքար-քէզ- Քարթալինիացի կառավարիչը, արացող վրացի, մօտ 50 տարեկան:

Թայիսանի- Նրա աղջիկը, մօտ 18 տարեկան:

Ս. Յանիա Փախստ-գլխացի, մօտ 70 տարեկան:

Էրեկի- Նրա որդեգիրը, մօտ 22 տարեկան:

Թոքո- Նրա որդին, մօտ 25 տարեկան:

Սարբա-մաս- Թափառական, մօտ 50 տարեկան:

Կարա-Բւսութ- Թիֆլիսի կառավարիչը:

Ալ-Թազախ-Հարեշ, Սուլեյմանի զլխաւոր ներքինին:

Բէսօ- Օթար-քէզի ծառան, մօտ 45 տարեկան:

Մայկո- Գայեանի դաւեակը:

Իբի-Սասդ- Արահակախմբի զլխաւորը, արար:

Դիգո- Վրացական զինոր:

Օքէյբան } —ապաստամբած վրացիների պարագ-

Սիբաս } լուսները:

Սուլեյմանի պահակախոսմբը: Վրացական զինորներ: Սուլեյմանի հարձերը: Գլխացիներ: Օթար-քէզի ծառաները:

I զարծողութիւն-Սուլեյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

II և III զարծողութիւններ-Օթար-քէզի ալդին Գօրաւալ մօտ:

IV զարծողութիւն-Թիֆլիսի մօտի կիրձերից մէկը:

V զարծողութիւն-Սուլեյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

Յմբօղջ զարծողութիւնը կատարւում է միջին դաւեի վերջերում (մօտ **XXV-րդ դարում), Վրաստանում, պարսկական նևանաւենիցից մէկի ժամանակ:**

I եւ II զարծողութիւնների մէջ տնօնում է հինգ օր:

II եւ III-ը կատարւում են մի օր ու գիշերւայ մէջ:

III-ի եւ IV-ի մէջ հինգ օր:

IV եւ V-ը մի գիշերում:

ովականութեա ու պատմականութեա իմանալու առ
որդեսաւու պահպանի ու ուժը պարզ է զայն գանձեալու
ու ուժը պահպան պահպան ու ուժը պարզ է:

Ա ռ ա ջ ի ն գ ո ր ծ ո ղ ո ւ ր ի ւ ն

Սուլեյման-խանի ապարանի Թիֆլիսի քերդում, Քոի ա-
փին, բաց պատշաճը (*stetrum*): Յետեր վարագոյր պատկերաց-
նում է գեր, միս կողմի բարականալը, Մերեխի ժառանք, որի վի-
րայ՝ սերոց եւ եկեղեցին: Պատշաճը գետից բաժանում է մի
շարք մարտնեայ, գունուոր, որուն սիւնեռով, որոնք միացած
են կանանեռով՝ զարդարած արարական գրեռով եւ արեւելան
զոյնզոյն մօգայինով: Ամեն տեղ վարդեր եւ որուն բայեր: Աջ
եւ ձախ (մանդիսականների կողմից) պատեր զարդարած են
արարական բանդակնեռով՝ սկսուց եւ մինեց: Պատերի մէջ բան-
դակազարդ դրեներ: Յեմի մէջ տեղը՝ բառակուսի աւազան, որի
մէջ անուշանուն չուր լցում է անկիննեռում շինած չորս ա-
ռուժների բերաներից: Եռանից ձախ—լայն զան՝ ծածկած զար-
գեռով եւ բարձեռով: Գարեն սկիզբն է: Վերջաղոյս, որը բաւա-
կան արագ փոխում է պայծառ բաւենակ զիւերի:

Սուլեյման-խանը,—մի նիստ, բարձրանասակ, բխադէմ
ծերունի, ուն միրունով, որի մէջ հաս-հաս արծարախալլ սպիտակ
մազեր, հազած արբայական երկար զգես, զլիսին բարձ սպիտակ
սպարօտ, որը զարդարած է ըողակնայ փետուրով, ծնկներին
դրած է ուկեկուռ բուր, որից կախած են համայիններ եւ որը
զարդարած է Դուրանից վերցրած արձանագրութիւննեռով,—հրա-
սած է գրգերից եւ բարձերից շինած լայն բազմոցի վրայ, սա-
սրուանի մօս: Գանի յետեր կանգնած են զինուրած թիկնապան-
ներ՝ զուխները փարարած սպարօտներով: Գանի ձախ կողմից—
ներինի Օ՛—Շազախը—մի հաստամարմին նարեւ, չաղ դէմով եւ
փոքրիկ, շարժուն աշեռով: Խոկ աջ կողմից—Կարս-Խւումը, նուր

միրունով, նիստ, ցածանասակ: Սուլեյմանի առաջը՝ Օքար-բեզը:
Պարւայ կրիստուր (Ասհանեցի կառավարիչ), բարձրանասակ, զեր,
ամրակազմ, պարսկական շարով, կրծքի վրայ կախած սպիտակ
թիկնեռով, առանց միրունի. բաւ յօներով, կարովի, սակայն, բաց
եւ երեւն ուրախ դէմով, որի վրայ հակատից մինչեւ թօփ կեսը,
խոր սպի: Նրա վրայ գէմին չըկայ: Լւսում է Քոյի խուլ վեսոցը,
Բազախը, Խւումը եւ Օքար-բեզը կանգնած են՝ զրուխները կախ,
զետնին նայելով, ձեռքերը փետուրով ծածկած:—Սուլեյմանը անար-
կու, բայց յոզնած եւ դեմին, մեռելային դէմով անօսած նայում
է վերեւ, թէզերի վիրուզէ հասիկները հասելով: Երկար բուրիւն:
Պալատականները հազին են ունեց բաւում:

Արքայացի պատում վնասվելում : Բառանահար, առնդմ խուսափ, ուր բառանահար (Հայովառաջ Ճանձնան) դաստիարակութեանը մասնաւ ճանձնաւ առի մեջեր լուսա նազարեանը ճանձնաւ առաջնաւ մաստիա առաջնաւ առաջնաւ լուսագույնը մազ մազմի նազարեանը առի գոյ խոնդր պատում մազուր:

Սուլիյման-խան: — Մեծ է Ալլահը!

Երեք պալատականներ: (Գլուխ տալով): — Մեծ է Ալլահը! (Լոռութիւն):

Սուլիյման-խան: — Շահը յանդիմանում է ինձ, Գիւրջաստանի հրամանատարիս: Դեռ հեռալից է լսւում նրա բարկութեան խուլ թնդիւնը: Մենք բոլորս նրան ոտքի հողն ենք:

Երեք պալատականներ: — Թող նրա ստւերը ծածկէ ամրող աշխարհը!

Սուլիյման-խան: — Իմերեթի նենդամիտ թագաւորը՝ Ախալցիսայի փաշայի, այդ անիծեալ սիւննիի սպառնալիքների պատճառով գաղտնի մարդիկ է ուղարկում Քարթալին և թարմութիւն է ներշնչում այս պիղծ շներին, քրիստոնեաներին:

Օրաց-բեզ: — Թող աղւէսներն ու չաղախները խմեն նրանց արիւնը:

Սուլիյման-խան: — Մրատես է իմ աչքը և արթուն իմ ականջը: (Հայեարք դարձնում է Օթար-բեզի վրայ): Քո իսկութիւնը շնչում են իմ ականջները, բայց քո սրտում դաւաճանութիւն է թագնւած:

Օրաց-բեզ: — Մատաղ լինիմ քո ճշմարտութեանը, տէր իմ! Քո բարկութիւնը ինձ համար միենոյն է թէ որոտի մի հարւած՝ պայծառ եղանակին: Իմ սիրտը մաքուր է քո դատաստանի առաջ:

Սուլիյման-խան: — Երբ դու հրաժարւեցիր խաւարից և ընդունեցիր իալամի լոյսը, ես մոռացայ քո յանդուղն կրիւր իմ անյաղթ զօրքի դէմ, քեզ

ինձ մօտ ընդունեցի և քեզ ստրկիդ, յանձնեցի իմ իշխանութիւնը Քարթալինում:

Օրաց-բեզ: — Ո՞վ դու մարգարէի սուր! Ես քո ողորմութեան փոխարէն աւելեցի հէնց այն տաճարները, որոնց մէջ երրեմն աղօթում էի! Իմ հայրերի դամբարանների վրայի կամարները կործանեցի, և հիմա գայլելն են ոռնում նրանց գերեզմանների վրայ: Գթացել եմ ևս իմ մաքաւորներին կամ հեռաւորներին: Դնեւ չէիր, որ ինձ հուր և թուր էիր անւանում քո ձեռքում: Իմ ձեռքից չէ, որ քրիստոնէական պիղծ արիւնը ահա՞ տասնութ տարի է, որ ներկում է Քոի և Արագւիի ջրերը և այդ արեան մէջ չըր հոսում միթէ իմ եղբայրների, հարազատների և բարեկամների արիւնը: Ես ըսաներեք եկեղեցիների քարը քարի վրայ չը թողի, տամնըմէկ վանք հողի հետ հաւասարեցի և քահանաների ու վարդապետների պղծւած մարմինները խաչափայտերի վրայ կապած քեցի գետը, որ լողան գէպի կասպիականը/ փառս իրանի! Ծագումով վրացի՝ ես ոտնակոխ արի, տրորեցի Վրաստանը, ինչպէս որդին կոխկոտում է պոռնիկ մօրը, և նրան շղթայակապ ու հնագանդ ձեցի ոտներիդ տակը: Եւ եթի դա քիչ է, եթէ դա անհաճոյ է քո յիշողութեան համար—ես քո զոհն եմ, գլխատիր ինձ, հզօր արքայ! (Խոնարհում է դէպի նրա ոտները):

Սուլիյման-խան: — (Այդ բոլորը լառմ էր՝ աջերը անշարժ յառած դէպի վեր): — Կախեթի էրիսթաւը քեզանից աւելի հաւատարիմ է, նա մինչև բկերը թաղել էր կենդանի տասներկու անիծեալ երևանցիների և եօթը շոք օրւայ ընթացքում թողել էր, որ նրանց ուտեն ճանձերն ու մժզուկները: Նրանց վախկոտ սրտերը չըկարողացան դիմանալ այդ տան-

շանքներին, և նրանք մատնեցին երևանու սարդարի դիտառութիւնները։ Նա ինձ շատ է վնասում իսպահանում։ Շահի համար նա ընծաներ է ուղարկում, ամեն մի ընծայի հետ ինձ զբարտում է։ Ո՞ւր են իմ արդարացումները։

Օրար-բեգ։—(բարձրանալով)։—Քո սրի մէջ են, մեծ արքայ!.

Սովէլիան-խան։—(մտախոն)։—Միայն սուրը չի տիրապետողների ոյժը։ Առիւծը երկար է դարանամուտ լինում, բայց երբ յարձակում է որսի վրայ—այդ յարձակումը պէտք է մահարեր լինի։ Քնեցրութիւնամուր և ապա յոշոտիք նրան։

Կարա-Խւառւմ։—Նախնի թագաւոր Սովէլիանի իմաստութիւնը ոչինչ է՝ մեր տիրոջ իմաստութեան հետ համեմատած։

Սովէլիան-խան։—Երևանի սարդարը գաճի պատւանդանին ուղարկում է ոսկի, արծաթ, շարարաղի նժոյգներ և քարեաններով՝ բրինձ, պտուղներ ու ցորեն, ամրակազմ ստրուկներ և գեղանի ստրը՝ կունիներ։ Նա սովում է շահի ոտների առաջ և ատամները կրծտացնում է իմ Գիւրջաստանի վրայ։ Բայց ո՞րտեղ էր այդ վախկոտ շունը, երբ ես, քսան տարի սրանից առաջ, բնաջինջ արի վրաստանի տղամարդկանց իրանց կանանցով և երեխաններով։ Միթէ նա է Իրանի ստրուկներք դարձել կախեթի և Քարթալինի իշխաններին, իսկ աղնւականներին և ժողովրդին՝ իր որսի շներին կերակուր։ Ե՞ս չէի, որ խաւարեցրի Գիւրջաստանի արեգակը և այս ձեռքը չէր, որ նրա վերջին թագաւորի կրծքից դուրս կրպեց նրա դողդոջուն սիրտը։ (Տան դուռը բացում է դէպի պատշամբը։ Դուան յիտեւը կանգնած է Զինարը պարսկական շքեղ արդ ու զարդով)։

Կարա-Խւառւմ։—Ո՞վ կարող է ընդունանալ հղորին։
Ալ-Բազին։—Դու Ալլահի մանգավը դըն ես!

Օրար-բեգ։—Թող կուրանան քո թշշամինները!

Համարեան
ամենինը
միասին։

Սովէլիան-խան (Գլուխը կախելով)։—Ահա քեզ մարդկային փառքը! Ես այսուել նստած եմ իմ գահի վրայ, իսկ թշշամիներս արդէն մոռացել են իմ ոյժը և օղածել պատել են ինձ։

Օրար-բեգ։—Փորձիր իմ հաւաքանութիւնը, մեծ արքայ։ Ես կըզինեմ ամբողջ Քարթալինը, կըլարձակւեմ Քութայիսի և Ախալցխայի վրայ, իմերեթի թագաւորին և Ախալցխի փաշային միմեացից կըկապեմ թոկով, խուրջինի նման կըզցեմ նրանց մի փալանած էշի վրայ և կըրերեմ, կըձգեմ քո շէմբի առաջ։ Հրամայիր միայն—և ես կըհարւածեմ երևանը և մի այծի պարկում քեզ կ'ուղարկեմ սարդարի գլուխը։

Սովէլիան-խան (խորաթափանց կերպով նայելով նրա վրա)։—Ժամանակը կըհասնի, և ես կապդ կարձակեմ։ Դեռ վաղ է։ Շահի հրամանով կըթուի սարդարի գլուխը։ Կարա-Խւառւմ!

Կարա-Խւառւմ (խոնարհելով)։—Հրամայիր, Տէր!

Սովէլիան-խան։—Ստրկական նամակ պատրաստիր։ Շահին ուղարկելու։ Դու ինքդ կըտանիս նամակը ընծանների հետ միասին։ Օթար-բեգ։ Այսօր, մինչև կէսպիշնը, կըձանապարհես Քարթալին։ Տանըմէկ օրից յետոյ այստեղ կուղարկես մի բեռը մաքուր ոսկի, երեք բեռը արծաթ և տամներկու ձի, որոնցից առաջինը՝ ձիւնի նման սպիտակ, իսկ վերջինը՝ գիշերւայ նման սկ, և որ, առաջինից սկսած

մինչև վերջինը, ամեն մի ձլու երակների ցանցը երևայ կաշու միջով:

Օքար-բեկ (խոնարհելով):—Բոլորը կը լինի իններորդ օրը:

Սովէյման-խան:—Ընտրի՛ր ամենագեղեցիկ աղջկներին, որ իս կողմից ընծայ ուղարկեմ Շահին: Եւ ինքս պէտք է նրանց հաւանեմ և քեզ համար աւելի լաւ կը լինի ծնւած չըլինել, եթէ... Սպասիր!... Լսել ես, դու աղջկի ունիս:

Օքար-բեկ (յուզմունքը ծածկելով, կատակի ձեւով):—Քառասունից աւելի, տէր, —մարդարէի ողորմութեամբ, որ ազատեց մեզ մի կին ունենալուց, թող օրհնուի նրա անունը: Ամենալաւերին ես, կը ներկայացնեմ քո պայծառ աչքերին:

II.

ԶԵՅՆԱՐ (անալով դուռը եւ ծածկոցը իջեցնելով երեսին):—Օթար-բէկ, չը մոռանաս Գայեանէին էլ ուղարկելու:

Օքար-բեկ (յնցելով՝ յետ է քաշում եւ յուզմունքը ծածկելու համար՝ խոնարհ զլուս է տախս: ԶԵՅՆԱՐ մօտենում է Սովէյման-խանի բազմոցին, խոնարհելով՝ համրուրում է նրա ծունկը, յետոյ բարձրանում եւ նստում է նրա մօտ: Պառաւ խասխարը դուրս է գալիս նոյն դռնից եւ կանգնում է բեմի խորքում, միւնի մօտ, կարա-իւսութը եւ Ա՛—Բազարը խոնարհում են ԶԵՅՆԱՐի տաղ):

Սովէյման-խան:—Ո՞ւմ մասին ես ասում, ԶԵՅՆԱՐ:

ԶԵՅՆԱՐ:—Ո՞վ դու Վաստանի արեգակ, վազուց է անցել այն անիծւած ժամանակը, երբ իս աչքերը դեռ չէին տեսել քեզ, և իմ սիրաը դեռ չէր գտնուում քո ոտների տակ: Դու հիմա թէ իմ հայրենիքն ես, թէ իմ հաւատը և թէ իմ տէրը: Բայց

երբ ես դեռ քոնը չէի—թող անիծւի այդ սկզբի յիշատակը, —երբ ես Գիւրջստանի նախկինը, անարժան թագաւորի, քո ձեռքով սպանւած այդ անարդ վախկոտի կինն էի, —ես լաւ ճանաչում էի իմ խորամանկ ժողովրդին: Օ՛, իզուր չէր, որ բոլոր ժամանակ աղջառում էի քեզ—մի խնայիր նրանց արիւնը, ոտնակով արա և ճնշիք նրանց: Միայն ահն է ուղղում նրանց արտաքը:

Սովէյման-խան (ահարկու):—Օթար-բէկ, ի՞նչ են նշանակում թագուհու խօսքերը:

Օքար-բեկ (զլուս կորցրած):—Զըգիտեմ, տէր: Թագուհու բարկութիւնը իւր ստրկի վրայ չէ:

ԶԵՅՆԱՐ (արհամարանքով):—Բարկութեան արժանի է առիւծը և ոչ թէ աղէսը: Տէր իմ, նա դեռ չի կարողացել քեզ խարել, և ոչ ոք չի կարողանալ քանի դեռ ես կենդանի եմ: Ես գիտեմ, թէ ինչ են պատրաստում քո դէմ հեռաւոր կամ մօտ տեղերում: Թոյլ չեմ տայ ոչքի, որ խարէ քեզ, և քո ամբողջ պահակը չի կարող քեզ այնպէս պահպանել, ինչպէս պահպանում է իմ սէրը: Օթար-բէկ, ուր է քո այն աղջիկը, որ ծնւել էր քո առաջին ամուսնութիւնից: —Մուխրանի բատօնի աղջկանից, որի զրդմամբ Սխալբալաքի սարերում դու երկար կռւում էիր մեր անյազթ սրի դէմ: Ուր է Մարիամից ծնւած աղջիկը: (Նպում է նրան լարւած ու սուր հայեցքով): Քո քրիստոնեայ կնոջից՝ Մարիամից, նրանից, որը ըսպանեց մեր տիրոջ ձեռքով, քո ամրոցը պաշտպանելու ժամանակ, երբ դու քարշ էիր գալիս իմերեթի արքայադասրի յետկից և նրա գող հօրից օգնութիւն էիր խնդրում անյազթ Սուլէյմանի դէմ: Ուր է քո այդ աղջիկը, Գայեանէն: Եթէ կարող ես, սաա—մեռել է:

Օքար-բեկ (ցնցւելով՝ բռնում է իւր փեշերից; Գունատ, աջերը լայն բացած՝ լվան է);
 Զեյնար (հայեացը լը հեռացնելով նրանից);—Աւելի, աւելի գունատիք, անարդ աղւէս! Նա կենդանի է, ով դու վրաստանի արեգակ: Նա իր աղջկան թագցրել է անմատչելի անտառներում, Ախալցիսի մօտ: Նա լեռնային շուշանի պէս բացւել է, և սա գաղտնի այցելութիւններ անելով՝ զմայլում է նրանով: Մեծ է այս ուրացողի հարեմը,—Օ՛, եթէ նա չըսիրէր կանացի գեղեցկութիւնը, այսքան հեշտութեամբ չէր կոխուաի այն ըոլորը, ինչի հաւատում էր,—բայց այդ հարեմում չըկայ Գայեանէն, և մի աղջիկ անգամ չըկայ, որ գեղեցկութեամբ հաւասարւէր նրան: Օթար-բեկ, քո բոլոր աղջիկները քեզ լինին, միայն Գայեանէին բեր արքայի համար: (Ճեղնական ձեւով նայում է Օթար-բէղին, որը կանգնած է գունատւած: Կարա-իւսուդն ու Ալ-Ռազախը չեն հեռացնում: Նրանից իրանց զիշտափի հայեացը): Սուլեյման-խանը՝ չարագուշակ կերպով աջերը կկոցիլով՝ իւր զիրով յիշեցնում է յարձակւելու պատրաստ փարի: Երկար լուսութիւն. իւրաքանչիւրը ապրում է իւր զգացմունքով):

Սուլեյման-խան:—Օթար-բեկ, Ի՞նչ կատաս դրա դէմ:

Օքար-բեկ (հնդն իրան տիրապետելով և պարզամիտ ու բարեսիրտ կերպով):—Եթէ միայն դրանումն է իժ յանցանքը, ապա ուրեմն ևս մեղաւոր չեմ: Գայեանէին ևս մեծացրել եմ՝ քեզ համար և ուզում էի բերել քո ոտքերի տակ, ինչպէս քո ստրկի ամենալաւ նուէրը:

Զեյնար (ցնցւելով, զարմացած, ակամայ):—Ի՞նչպէս, դու... (ինդն իրան տիրապետելով): Վաղուց պէտք էր այդպէս:

Սուլեյման-խան:—Քանի տարեկան է նա: Օքար-բեկ:—Տամնըվեց: Զեյնար:—Տամնութ:

Օքար-բեկ (շփոթւելով):—Կարելի է, ով թագուհի: Ես իմ տարիքը չըգիտեմ, որտեղից պիտի յիշեմ մի որ և է աղջկայ տարիք: Բայց նա տեսքից դեռ այնքան մատղազ է երեսում, որ ես քո բարկութիւնից էի վախենում, հզօր արքայ, քեզ անարժան ընծայի համար:

Սուլեյման-խան (գլուխը շարժելով):—Ի՞նչպէս խորամանկ ես դու, քարթալինցի:

Օքար-բեկ:—Ո՞վ դու մեծ սրտագէտ, ի՞նչ է իմ խորամանկութիւնը քո իմաստութեան առաջ: Ճըշմարիտ է, առաջին տարիները ես կուր էի մզում քո դէմ. խաւարը այն ժամանակ ծածկել էր իմ աչքերը: Բայց ես չէի, որ Գիւրջատանի տիրապետողներից և իշխաններից առաջինը եկայ քո բարձր շէմքը և բաց գլուխս զրի կոճղի վրայ: Ո՞վ բերաւ իր հետ նաև Մուխրանի բատօնին կամ Ցիցա իշխանին և ըմբոստ Սմբատին ու լեռնային ամրութիւնների բազմաթիւ իշխաններին: Երեք օր՝ սոված ծարաւ՝ մենք ընկած էինք քո շէմքի առաջ և խոնարհութեամբ սպասում էինք մահան: Դու գթացիր մեզ, և և՛ քո կամքի համաձայն՝ ընդունեցի յաղթական իւլամբ: Այդ ժամանակից անցել է ահա մօտ 20 տարի: Յիշիր, ով դու Ալլահի սուր, ով է ինձանից աւելի հաւատարիմ ծառայում քեզ: Մուխրանի բատօնը փախաւ իմերեթ, Ցիցան մեռաւ, իսկ նենդամիտ Սմբատը միացել է անհաւատարիմ Օքարիւնի հետ և թափառում է Եալզուջայի սաւրերում՝ արշաւանքներ գործելով քո հաւատարիմ ծառամների դէս, ինչպէս յովազը՝ զառների վրայ:

Նրանց մօտ են փախչում այն քրիստոնեաները, որոնք՝ իմ կատաղութիւնից սարսափելով՝ առերեսս իսլամն էին ընդունել: Նրանց մօտ պատոպարւել են այն քահանաներն ու վարդապետները, որոնք խուսափել էին իմ ձեռքից: Այդ բոլորից յետոյ միթէ քո առաջ կը կեղծէի աղջկաս համար, երբ իմ հոգին, իմ սուրը, իմ ոյժը դրել եմ քո ոտքի տակ:

Ձենար: Ստրուկը իր տիրոջը արած ծառայութիւններն է հաշւում: Դու Բնչ ես: Թագաւորի ոտքի տակի հողը, ուրիշ ոչինչ: Ի՞նչ է քո ոյժը մեր արաբական զինուորների և մեր ղղլլրաշների հետ համեմատած: Կամ գեռ շարունակում ես կարծել, թէ ծառայում ես քո այն վրացու ծնունդին, որին դուք, իշխաններդ, գողացնում էիր ձեր ըմբռուտութեամբ և գահի վրայ նրան պահում էից միայն այն պատճառով, որ Ամիլախւարը վախենում էր, թէ մի գուցէ նրա տեղը Օրբէլեանը նստի, Օրբէլեանը վախենում էր Սմբատից, Սմբատը՝ Ցիցայից: Դուք ձեր գիշատիչ ատամներով՝ գայլերի նման՝ զանազան կողմեր էիք քարշ տալիս արքայական սեղանի ծածկոցը, որի վրայ՝ տիկինի նման՝ նստած էր ձեր փոքրիկ թագաւորը: Սուլէյման թագաւորը տրորեց ձեզ իր մի շնչով: Նրա սրի շառաչիւնից թռչում էին ձեր զլուխները՝ յիմար ոչխարների գլուխների նման: Եւ թող իրանց զլուխները պահպանեն նրանք, որոնք մինչեւ հիմա գեռ պահպանել են: Ողորմած է Սուլէյման թագաւորը: Եթէ նա ինձ լսած լինէր, իշխաններն ու ազնաւորները, արար վերակացուների մտրակների հարւածների տակ, վաղուց վարելիս կը լինէին հողը: Իսկ դու, որ հարեմի համար քո խիթճը ծախեցիր, աղաչում էիր միայն, որ քեզ թոյլ տան դինի խմելու: Դու չըգիտէիր, թէ Բնչը դերա-


դասես—հարեմը՝ գինուն, թէ գինին՝ հարեմին: Եւ ինչպէս աղան շուն, թախանձելով ձեռք բերիր թէ մէկը և թէ միւսը: Ի՞նչով ես դու հպարտանում: Նրաննվ, որ դու, արբեցնդ և անառակ, վախենալով, որ կեանքից և յարգանքից կը զրկւես՝ սողում ես անյաղթի ուսների մօտ: Լաւ պահապան ես իսլամի, գիննվ արբած:

Օքար-բէզ (աշխատելով կատակ անի): — Ծերացել եմ, իմ տիրուհի: Գինին տաքացնում է գլուխս և ոյժ է տալիս բաղկիս, ի վասու իսլամի: Ես այսպիսի չափ ունիմ—որքան խմեմ, երկու անգամ աւելի պիտի թափեմ անհաւատների արիսը: Կարելի է մարդագարէի կը եռքի իմ նժարը նրանով ծանրակշուէ, խաղաղութիւն նրան և օրհնութիւն:

Սուլէյման-խան: — Դու ծիծաղում, ես, Օթարբէզ:

Օքար-բէզ: — Ծիծաղում եմ, տէր: Միայն շներն ու չարագործները չեն ծիծաղում, իսկ մաքրասիրտ մարդը միշտ ժպիտով ուրախացնում է իր տիրոջ սիրտը: Եւ ինչի՞ պէտք է ես տիրեմ: Մեր ճակատագիրը գրւած է երկնջում, նրան չի կարելի փոխել: Եթէ ինձ վիճակւած է զոհ գնալ քո կամ թագունու բարկութեանը—ես նոյն ժպիտով կը մեռնեմ, որովհետեւ իմ խիթճը մաքուր է քո առաջ: (Արիաբար նայում է նրանց աջերի մէջ: Լոռութիւն):

Սուլէյման-խան (վերկինալով): — Կատարիր իմ հրամանները: (Ազքերը պսաղացնելով): Եւ առանց խարդախութիւնների: Կարա-իւսուփի!... Այսօր էլի իմ ականջին զանգի ձայն հասաւ—նա ինձ ձանձրացրել է: Գնա և իմ կողմից ասա վրաստանի կաթողիկոսին—ես յետ եմ առնում՝ Սիօնում, Անշխախթում և ամբողջ Թիֆլիսում զանգահարերու թուլութիւնը:



Թողարկանց զանգահարութեան աղօթեն: Դա էլ նրանց բառական է:

Կարա-իւսում:—Նա զաշնագիրը մատնանիշ կառնէ, տէր: Վաղը նրանց Զատիկն է:

Սովորյան-խան:—Մարդարէն ասել է—Խոլամը քանդում է բոլոր դաշնագրերը և փոխում է սրտերը: Ասա նրան, եթէ կրկնն անգամ այդ զանգի ձայնը ականջիս հասնէ, կը հրամայեմ, որ նրանց զանգակներից թնդանօթներ թափեն, իսկ եկեղեցիները ախոռներ կը դարձնեմ, ինչպէս Մեթեխի եկեղեցին վառօդի պահեստատեղ եմ դարձրել: (Կարա-իւսումը իսրը զուլի է տալիս եւ զնում):

Օքար-բեկ:—Բայց ինչի՞ ես յետաձգում, մեծ արքայ: Թոյլ տուր ինձ իմ չափարներով անյապաղ ժողովեմ բոլոր զանգակները և բերել տամ այստեղ —բերդը:

Զեյնար:—Մի հոգա Թիֆլիսի զանգակների մասին, Օքար-բեկ: Մենք այդ գործը՝ առանց քեզ էլ կարող ենք անել: Դուցէ նրանք դեռ անհանգընատացնում են քո ականջները և արթնացնում են քո մէջ այն, ինչ որ ուզում ես մոռանալ:

Օքար-բեկ (կրկն զունադաւեց եւ զնցեց զուլիը):—Ո՛չ իմ տիրունի: Այս, ինչ որ մոռացւած է, մեռել է և նրան արթնացնել չը կարողացան նոյն իսկ հեկանքներն ու աղերսանքները, ուր մնաց թէ պը-դընձէ կաթսաների ձայնը:

Սովորյան-խան:—Արի իմ յետեից, Ալ-Շաղախ: (Գնում է, Ալ-Շաղախն ու Թիկնապահները նրա յեմելից):

III.

Զեյնար (Օքար-բեկին):—Սպասիր, Օքար-բեկ: Թէ դու շտապում ես Օքարէնանի խնջոյքին: Նա, ասում են, իր խմբով թափառում է այս կողմերում:

Օքար-բեկ:—Ես մտածել անգամ չեմ ուզում դաւաճանների մասին, իմ թագուհի:

Զեյնար:—Սակայն դու մտածում ես քո մասին: Օքար-բեկ:—Ես դաւաճան չեմ: Ի՞նչով կարող եմ քեզ հաւատացնել, որ ես հաւատարիմ եմ:

Զեյնար:—Ո՞ւմ: Օքար-բեկ:—Իմ տիրոջը և քեզ: Զեյնար:—Նոյն իսկ երկուսիս: Օքար-բեկ (զնամկանան է դոււմ):—Թագաւորն ու իմ թագուհին ինձ համար անբաժան են: (Յանկարծակի): Ես այն պատճառով էի ուշացնում Գայեանէին բերելու Սովորյան թագաւորի մօտ, որ քեզ բարի էի ցանկանում, իմ թագուհի: Մենք, ծեր մարդիկս, թուլութիւն ունինք գէպի մատղաշ գեղեցկութիւնը: Բայց դու ինքդ մատնանիշ արիր նըրան, ապա ուրեմն մի մեղագրի ինձ:

Զեյնար:—Դու իմ մասին ես հոգացել: Շնորհ հակալ եմ քեզանից, իմ վաղեմի ծառայ: Իսկ ես մտածում էի, թէ քո առաջւայ իշխանական պատկ մնացորդն է խօսացել քո մէջ: Զէ որ Գայեանէն քո միակ աղջիկն է:

Օքար-բեկ:—Ո՛չ, իմ թագուհի... Զեյնար:—Գիտեմ: Նրանց մասին չէ խօսքս: Այլ Մարիամից, Մուլիսանի բատօնի աղջկանից: Միակն է:

Օքար-բեկ (գողացող ձայնով):—Միակն է!...

Զելնար:—Պատմիր նրա մասին: Նա բարձրահասակ և վայելչակաղմ է:

Օքար-բեկ:—Վայելչակաղմ... և բարձրահասակ:

Զելնար:—Ես յիշում եմ նրա աչքերը:
Օքար-բեկ:—Ո՛, նրա աչքերը... Ո՛չ աչքերը
գեղեցիկ չեն, իմ թագուհի!

Զելնար:—Սուտ ես խօսում: (Օթար-բեկը խոնարհում է), Նրա մայրը այնպիսի աչքեր ունէք, որոնց
նմանը դու չես գտնիլ քո ամբողջ հարեմում:

Օքար-բեկ:—Հայրը չի կարող իր աղջկայ գեղեցկութեան մասին դատել, իմ թագուհի: Նա անվեհեր և... (գժարութեամբ) հպարտ բնաւորութիւն
ունի... Սիրում է որսորդութիւն և գաղաների յետեից արշաւում է չըփարժեցրած ձիու վրայ—քամուց
էլ արագ: Ես վախենում եմ. միթէ այդպիսի բնաւորութիւնը հաճելի կըլինի արքայից-արքային: (Աղաջական դէմքով նայում է Զէլնարին):

Զելնար (հայեացը ըլնեռապնելով նրանից):—Արքայից արքան կըզմովէ նրա բնաւորութիւնը: Երազի նման յիշում եմ—մօտ քան տարի սրանից առաջ նախկին թագաւոր և իմ ամուսին թէյմուրազը իր երեխային ցոյց էր տալիս քեզ և ասում էր—Օթար,
սրա համար հարմանցու ծնիք: Թէրեւս դու գերագասէիր Գայեանէին տալ փոքրիկ վրաստանի թագաժառանգին՝ քան աշխարհքը տիրապետողի հարեմն ուղարկել:

Օքար-բեկ (մուայլ դէմքով, աքերով զթութիւն աղերսելով նրանից):—Մենք բոլորս Ալլահի և նրա սուերի սորուկն ենք երկրիս վրայ:

Զելնար:—Ճշմարտապէս ազատ վրացու պատասխան է:

Օքար-բեկ:—Դու փորձում ես ինձ, իմ թագուհի: Բայց եթէ թանկ է քեզ համար ըստ սպանւած որդու յիշատակը...

Զելնար (սառնութեամբ):—Ի՞նչով ես դու ինձանից լաւ: Ի՞նչի իմ որդին քնած է գերեզմանում փոխանակ Վրաստանում թագաւորելու, իսկ քո աղջկը ապրում է ազատ և շնչում է հայրենի օղոքի: Ես շուտով մոռացայ որդուս, դու էլ շուտով կըմուանսս քո աղջկան: Եւ քեզ համար հեշտ է մոռանալ: Քո տունը լի է կանանցով, հարձերով և սուրբ-կուհիներով. գինի, ուրախութիւն, պատիւ... Եւ դու պէտք է Շահի տարփուհու հայրը լինես—որպիսի պատիւ ուղղահաւատ վրացու համար: Իսկ եթէ նա կարողանայ հաճոյանալ և շահի սառած արիւնը տաքացնել էլ ովք կըհամարձակի քեզ դիմուի: Դու գոհ չես ճակատագրից և ինձանից, Օթար-բէկ: Շուտով քո աղջկան բեր այստեղ: Դու օգնեցիր մեզ մի քրիստոնեայ ժողովուրդ դնելու շահի սաների մօտ. մենք կըվարձատրենք քեզ—մենք նրա սոների մօտ կըզնենք քո սիրեցեալ աղջկան: Իսկ իմ որդին գերեզմանումն է, և ես մոռացել եմ նրան: Ո՞րքան զօրք ունես դու Գորի:

Օքար-բեկ:—Հինգ հազար ձիաւոր:

Զելնար:—Նրանց մէջ շատ վրացի կայ:

Օքար-բեկ:—Հասարակ ձիաւորները համարեա բոլորը վրացի են: Արաբներն ու պարսիկները վաշշերի գլխաւորներ են:

Զելնար:—Դու երաշխաւո՞ր ես նրանց հաւատարմութեան համար:

Օքար-բեկ:—Գլխովս, իմ թագուհի: Նրանք ուրիշ գնալու տեղ չունեն:

Զելնար:—Իսկ իմերթը,

Օքար-բեգ:—Այստեղ թագաւորում է Ախալցիկի փաշան: Ի՞նչով են թուրքերը պարակներից լւա... (սթափելով): Այսինքն վրացիների համար, սարուկ քրիստոնեաների համար... Թող նրանք անիծեալ սիւնիների հետ միասին փռւին շահի ոտների տակ:

Զենարփ: (Թազնելով իր հանովքը):—Վատ ես կեղծում, քաջ Օթար-բէգ: Բայց լւա ես շոգոքորթում: Միայն դա է, որ քեզ փրկում է: Գնա խաղաղութեամբ, Օթար-բէգ: Ես չեմ մոռանալ քեզ: Խմիր, գգիր քո կանանց և ծառայիր մեզ, ինչպէս հաւատարիմ շուն: Ել ի՞նչ ես ուզում, Օթար-բէգ!

Օքար-բեգ:—Երկար օրեր եմ մաղթում քեզ, իմ թագուհի: (Գնում է՝ գուլիր կախած):

IV.

Զենարփ (Խսախարին):—Խսախար! Միթէ առ անվեներ Օթարն է, Թէյմուրազ թագաւորի աջ ձեռքը, Վրաստանի առիւծը!

Խսախար (Խեղուած եւ ճնշած ձայնով):—Քանի որ ռազմիկ նժոյգը բեռնւած է ինում ուզտի նման, նա չի կարողանում արշաւել: Վայր զցիր նրանից նախատիների այդ բեռները, և նա կըսկսէ խաղալ քո տակը:

Զենարփ:—Նա ի՞նքն է՝ առանց ընդդիմութեան տալիս իր աղջկան: Նա ի՞նքն է առաջարկում հինաւուրց տաճարներից զանգակները պոկել, այն տաճարներից, որտեղ ինքը միլոտել, պսակւել է: Ես անարզում էի նրան, իսկ նա, ինչպէս մի վախկոտքերծ՝ մտրակի հարւածների տակ, իմ ոտքերի փոշին է լիզում, կաղկանձում, պոչը խաղաղացնում, գալարում: Եւ դա Օթարն է: Նա ի՞նչ նիզակակից է նրա համար: Նա ի՞նչ նեցով է... Նա կըմտանէ մեզ, Խսախար, կըմտանէ:

Խսախար (գլուխը չարժելով):— Ո՞չ, եթէ գնայ— չի մատնիլ:

Զենարփ:—Ամեն բան մեռել է նրա մէջ՝ բացի արքեցողութիւնից, անառակութիւնից և փառքի ծարաւից: Ստրկութիւնը ոչնչացրել է նրա մէջ սիրոյ զգացմունքը: Միթէ ամբողջ Վրաստանը այդպէս է դառել:

Խսախար:—Լսել ես, թագուհի. Սուլէյման-խանը հրամայել էր մեջի շինել Սէյդարադում: Ժողովուրդը վրայ վազեց, որմատիթիներին կոտորեց և պատրաստած քարը ջուրը թափեց: Պարսիկները դեռ չէին հասել բերդից, երբ ամեն բան վերջացաւ, և ժողովուրդը ցրւեց: Հիմա այդ անիծեաները վազվաւմ են քաղաքում և բռնում են թէ անմեղներին և թէ մեղաւորներին, և տանում են Կարա-Խւուֆի մօտ: Հարուստները կաշառքով մի կերպ գլուխները ազատում են այդ աղան շնից, իսկ չքաւորներին դիմատում են, եթէ նրանք չեն փոխում իրանց հաւատը:

Զենարփ (Վատ հայտացրով):—Ո՞վքեր են այդ մարդիկ:

Խսախար:—Շրջակայ գիւղացիները, հովիւները, հայ արհեստաւորները, այդեպանները, համբարները— Էլ ով զիտէ: մի խօսքով՝ ժողովուրդը:

Զենարփ (անձկալի):—Խսախար, այլևս չեմ կարող յապացել: Իմաց տուր Անանիային—թող նրան բերէ Օթարի մօտ—Գօրին: Ես պէտք է տեսնեմ նրան, իմ ապաւէնին, իմ սրտի արեանը, Ասածոյ զինւորին, Վրաստանի փրկութեանը:

Խսախար:—Ժամանակ է, ժամանակ:

Զենարփ:—Քսան տարի է, Խսախար: Ինչպէս նա ծեծկում և լալիս էր և չէր ուզում Անանիային գնայ այն անիծեալ գիշերը: Կրծքից պոկեցի նրան

—և քսան տարի չէի համարձակւում նայել նրա վրայ... Օ՛, եթէ այս գաղանը իմանար նրա մասին... Ժամանակ է! ժամանակ է, իսսախար! Իմաց տնօր Անանիային, թռող մեր երեխաներին բերէ Օթարի մօտ: Ես այնտեղ կըլինեմ: Եւ եթէ հզօր Օթարի մէջ իսպառ չի մնուել ամեն բան, նրա ոտները կընկնի և նրանում կարթնանայ նրա ուղմական ողին ու նա կըմարտնչէ Աստուծոյ, հայրենիքի և իւր երիտասարդ թագաւորի համար!

Իսախար:—Կամաց! որքան մօտ են լինում որոտ ու կայծակը, այնքան աւելի խորն է տիրում անդորրութիւնը: Որքան մօտ լինի ժամը, այնքան սակաւ պէտք է լինի խօսքը: (Գլուխը բարձրացնում է): Լուսինը պայծառ փայլում է, բայց Մեթեխի յետեւ փց ամպ է երեսում: Քամին էլ նստել է: Լո՞ւմ ես, ինչպիսի անդորրութիւն է: Այս գիշերը որոտ ու կայծակ պէտք է լինեն:

Զեյնար:—Թող շուտ գայ այդ գիշերը: Ահեղ, սոսկալի գիշերը՝ ամբողջովին Աստուծոյ բարկութեան շամթերով բռնւած: (Դուռը բացւում է, Սուլէյման-խանը երեսում է դռան մէջ, իսսախարը կրկին անցնում է բնմի խորը: Զեյնարը կանգնած է՝ լուսի շորերով լուսաւորւած):

V.

Սուլէյման-խան:—Այդ դժւ ես, Զեյնար:

Զեյնար:—Ես եմ, տէր իմ:

Սուլէյման-խան:—Օգոս արձճի պէս ծանրացել է: Օթար-բէգը գնացէլ է:

Զեյնար:—Գնացել է, Տէր:

Սուլէյման-խան (Նստում է թափանի վրայ: Զեյնարը կանգնած է նրա առաջ: Խորրում իսսախարը):—Զեյնար,

այլես նրան չեմ հաւատում: Ես հրամայեցի Ալ-Շազախին, որ քեզ համար ձիեր և ուղեկիցներ պատրաստի ունենայ: Դու պիտի գնաս նրա յետեկից: Զեյնար! նայիր հարիւրաւոր աչքերով, լսիր հարիւրաւոր ականջներով: Ամեն բան իմացիր: (Ստածութեան մէջ է ընկնում):

Զեյնար (Սուլէյմանի ոտքերի մօտ):—Կիմանամ, իմ թագաւոր! Ես չըկարողանամ իմանալ: Միթէ իմ սիրտը ինձ աւելի շուտ չի ասիր՝ քան կըլսեն իմ ականջները կամ կըլտեսնեն աչքերս:

Սուլէյման-խան:—Գիշերը անկողնիս շուրջը ինչ որ ձայներ են պտտւում: Աստղերը խաւարում են, երբ նայում եմ նրանց վրայ:

Զեյնար (Պարած լուս է):—Աստղերը խաւարում են: Իսկ ինձ համար նրանք աւելի պայծառ ու աւելի պարզ են փայլում: Ես իմ մէջ քո հոգին եմ կրում, ես քեզ համար չեմ վախենում:

Սուլէյման-խան:—Գնա Օթար-բէգի յետեկից: Եւ հէնց որ լսես, թէ նա յարաբերութիւն ունի եաղուջայի լեռների ապստամբների կամ իմերեթի թագաւորի կամ Ախալցխի հետ, կամ Երեանի սարգարի հետ, —իսկոյն հրամայիր մորթել նրան քո աչքի առաջ և գլուխը ինձ ուղարկիր:

Զեյնար (Ղժւարութեամբ թազցներով ուրախութիւնը):—Իմ ամբողջ երջանկութիւնը, հոգոյս թագաւոր, քեզ ծառայելն է, մօտ լինեմ թէ հեռու: Իսկ իմ պարգևը քո սիրալիր հայեացքն է, քո ժպիտը և հանգստութիւնը!

Սուլէյման-խան:—Ո՞վ հաւատում է կնոջը, նա ինքը կարում է այն ձիւղը, որի վրայ նստած է: Բայց ես քեզ հաւատում եմ, որովհետեւ... եթէ ես կորչեմ, դու էլ կըկորչես:

Զեյնարք:—Ի՞նչի համար ապրեմ առանց քեզ,
իմ հոգու լոյս:

Սովորման-խան:—Քո գեղեցկութիւնը հիմա
անհնան ժամանակի գեղեցկութիւն է, նա չի կարող
պաշտպանել քեզ... Քեզ առում են Գիւրջասանում,
այդ պատճառով են հաւատում եմ քեզ:

Զեյնարք:—Ինձ համար վախենալուց չէ, որ քեզ
պահպանում եմ: Երբ Սովանլուխի ճակատամարտից
յետոյ՝ դու մօտեցար Թիֆլիսին, ես կարող էի վախ-
չել իմբրեթ, Միսգրելի, Դուրիխ: Ինքը Մուկո-
վի Թագաւորը այն ժամանակ խոստացել էր ինձ իր
օգնութիւնը: Բայց իմ սիրուը լի էր քո համբաւով,
ես տեսնում էի քեզ երազներիս մէջ—և ես՝ ծնկա-
չոք քո ձիու առաջ՝ մատուցի քեզ բանալիները:
Իշխանութեան և մահւան փայլը պասկում էր քո
ճակատը: Երբ դու թեքւեցիր գէպի ինձ—կայծակ-
նահար եղաւ իմ կուրծքը: Քո առաջ անապատի
առիւծն է կանգնած, հնչում էր իմ մէջ: Նա ամեն-
քին նւաճել է,—քո սիրուը պիտի դիմանայ նրա
հայեացքին: Եւ ես քեզ տւի իմ հաւատը, խորհուրդ-
ները, կեանքը, հոգին և մարմինը: Թեքւած մասրիդ
վրայ՝ զիշերները ես պահպանում էի քեզ: Քո բար-
կութիւնն ու կործանումները ես ուղղում էի նրանց
դէմ, որոնք երբեմն ինձ մեծացրել ու փայփայել են
և զուխ են խոնարհեցրել իմ առաջ: Լինելով թա-
գաւորի աղջիկ և կին՝ ես ծառայել եմ քեզ՝ սարկու-
հու նման: Խակ դու գիտես ինձ, մահւան երկիւղ չը-
կայ իմ մէջ, և իմ երակների մէջ հոսում է հպարտ
արիւն: Դու ինքդ հասկացար այդ, երբ քո կիրքը
գէպի ինձ պաղեց—թոյլ տւիր ինձ, որ խորհրդակից
լինիմ քեզ մասնակից լինեմ քո գահին և բազմեմ
նրա վրայ քեզ հետ միասին: Աակայն ինչ է ինձ

համար իշխանութիւնը: (Խանդավառ): Ամեն բան կը-
տայի, որ, ինչպէս առաջ, թագցնէիր ինձ մարդկային
հայեացքից, տանջէիր ինձ խանդովդ, ենթարկէիր
քո ներբինիներին: Կամ եւ գեռ էլի գեղեցիկ չեմ:
Չեմ կարողանում քեզ տալ այն բաւականութիւն-
ները, որոնք տալիս են քո տարփուհիները! (Խոնար-
հութեամբ): Բայց գու այդպէս ցանկացար—և ես
խոնարհեցի քո առաջ: Ես ինքս սկսեցի ընտրել քո
հաճոյքին բաւականութիւն տւողներին: Երկրիս վրայ
քեզ շրջապատեցի դրախտի հիւրիներով: Միայն թէ
դու հանգստանաս և զւարձանաս, ես... ես... Օ՛,
ամեն մի գիշերւայ քո բաւականութիւնները ինձ
համար մահ են եղել! Մահ!... Դուք, տղամարդիկող,
գիտէք միայն զւարձանալ—միթէ դուք գիտէք, թէ
ինչ է նշանակում սիրել:

Սովորման-խան:—Դու գեռ գեղեցիկ ես, երբ
զայրանում ես:

Զեյնարք:—Ո՛չ, ես գեռ գեղեցիկ եմ, որովհետև
սիրում եմ քեզ, ուղղում եմ ծառայել քեզ... սողալ
քո ոտքերի առաջ և տիրել քո հոգուն: (Խոնարհում է
դէպի նա):

Սովորման-խան:—Ինձ դուք եկան երեկուայ
ստրկուու հէքեաթիները: Ուղարկիք նրան ինձ մօտ:

Զեյնարք:—Միսգրելիի իշխանի ընծան, մոռ-
քայային:

Սովորման-խան:—Ես չեմ յիշում նրանց անուն-
ները: Բեր նւագարանդ: Մի քիչ հովացաւ օգը: Կա-
րելի է ես քնիմ լսելով նրա պատմութիւնները և
քո մեղմ երաժշտութիւնը: Ես վաղուց էի որ չեմ
քնում:

Զեյնարք (համբուրելով նրա ձեռքը):—Գալիս եմ,

իմ թագաւոր: (Վնում է, նրա ետեւից խսախարը: Հակառակ կողմից մտնում է կարա-իւսուփը):

VI.

Կարա-իւսուֆ:—Տէր իմ, կաթողիկոսը սուրբ հանդակներով հրաման է ուղարկել քահանաներին և վարդապետներին, որ զանգակները չը զարնեն:

Սովելյման-խան:—Պահապաններն իրանց տեշ դերն են:

Կարա-իւսուֆ:—Տեղերն են, տէր իմ:

Սովելյման-խան:—Գիշերապահ ձիւորները ուղարկւած են:

Կարա-իւսուֆ:—Ուղարկւած են: Դարբանները փակած են, և թնդանօթները Մեթեխից ուղղւած են դէպի լեռներն ու քաղաքը:

Սովելյման-խան:—Մեջիդը քանդողներից շատերն են բռնւած:

Կարա-իւսուֆ:—Ի փառ Ալլահի, քսանեօթ մարդու կողերի ոսկորներից, եմ կախել ամրոցի պատերից: Յիսուն մարդու զիխատել եմ և զիակները ձգել աղբակոյաների մէջ: Երեսունըվեց հոգու հէնց նոր բերին:

Սովելյման-խան:—Վաղը առաւօտեան զիխատիր նրանց մէջդանում և յայտնիր ժողովրդին իմ հրամանը, որ բոլոր բնակիչները իրանց մէջքերի վրայ բերեն մի-մի տաշած քար՝ մէկ ու կէս կանգուն երկարութեամբ, լայնութեամբ և հաստութեամբ ու դարսեն նրանց կործանած մեջիդի տեղը: Եօթն օր ժամանակ տնուր նրանց:

Կարա-իւսուֆ:—Փառք արդարակշիռ դատաստանիդ!

Սովելյման-խան:—Օթար-բէզը ճանապարհուել է:

Կարա-իւսուֆ:—Հէնց այս բոպէիս ամրոցի դոները փակւեցին նրա յետերը:

Սովելյման-խան:—Երեք օրից յետոյ թագուհուն ուղարկում եմ նրա յետերից: Իւսուփ! Շուրջն դաւաճանութեան հոր է փչում: (Կարա-իւսուփը ցնցուուի, եւ նրա դէմքը փոխուում է): Ալ-Բաղախը պէտք է նրա հետ գնայ:

Կարա-իւսուֆ:—Ալ-Բաղախը ճաւատարիմ է, բայց յիմար է: Թագուհին խելացի է: Թող Աստեած բազմացնէ նրա կեանքի օրերը:

Սովելյման-խան:—Ի՞նչ ես ուզում ասել:

Կարա-իւսուֆ:—Նա կըկարդայ բոլորը, ինչ որ Օթար-բէզի հոգու մէջ և նրա շուրջը լինի:

Սովելյման-խան:—Իսկ յԵտոյ:

Կարա-իւսուֆ (կրանարի):—Հերմէսի աչք, այդպիսի գործի համար ես կուղարկէի սիրեցեալ կնոջու, բայց նրա համար օգնականուհի կընշանակէի այնպիսիներից մէկին, որնք ուզում են սիրելի դառնալ: Ոսկին ճանաչում են փորձաքարով, կինը՝ կնոջով, իմաստութեան աղբիւք:

Սովելյման-խան (սուր կիրապով նայում է իւսուփին):—Գնա: Լաւ խորհուրդ ես տալիս:

Կարա-իւսուֆ (Սովելյմանի ոտներին մօտ գտնինը համշուրելով):—Թող մեծանայ քո ստեբը, Դէստօնի որդի! (Գնում է: Ներս է մանուշ Զէնաբը՝ բերերի Ոռլայային. նրանց յետեւից—խսախարը):

VII.

Զէնաբ:—Արի, քո երջանկութեան զիշերը հասել է, Ռուքայա!

Ռուքայա (Երկիւղից դողալով):—Մեր զիսի տէրը խիստ և ահարկու է, ես վախենում եմ...

Զելնաբ (տանելով նրան կիսապառկած Սուլէյմանի մօտ):—Խոնարհւիր մեր տիրոջ ոտների առաջ, գեղանի ազջիկ, և նրա համար հէքիաթ ասա: (Սուլէյմանին): Քո պայծառափայլ դէմքի ճառագայթը դարձըն դէպի նա, արքաների նւաճող: Վարդի կոկոնը նրան է սպասում, որ բանայ իր անուշաբոյր թերթիկները: (Հեռանում է դէպի պատշամքը, նստում է սիւնի մօտ, ստերում: Խսախարը թառը տալիս է նրան եւ նստում է նրա մօտ ու գրկում իր ծննները: Սուլէյմանը յետ է քցում Ռուբայայի ծածկոցը եւ խաղում է նրա մազերով: Ռուբայը Սուլէյմանի ոտների մօտ է. նրա ծայնը զողում է. գեղեցիկ դէմքը գունատւել է երկլւդից: Աչքերը շոշողում են):

Սուլէյման:—Ո՞ ըտեղացի ես դու:

Ռուբայա:—Զըգիտեմ, տէր իմ: Յիշում եմ, դեռահաս աղջիկ էի, որ ինձ բերին Մինզրելի: Ծովով բերին: Յիտոյ ես մեծացայ այստեղ, լեռներում, ծովի մօտ:

Սուլէյման-խան:—Ո՞վ է սովորեցրել քեզ այդ պատմութիւնները:

Ռուբայա:—Պառաւ կանայք: Նրանք ինձ սովորեցրել են նաև երգել ու պարել: Ես բոլորը սովորել եմ, որ հաճոյանամ քեզ, տէր իմ: Հրամայիր, ես կըպատմեմ քեզ ծովերի արքայ՝ Հողմի և Մինզրելիի արքայադստրի սիրոյ մասին.

Սուլէյման-խան:—Ասա:

(Զէնարը սկսում է նւագել մի բնրոյշ եւ կրակու մեղի արեւելեան ոգով):

Ռուբայա:—Գուրիայի թագաւորը մի աղջիկ ունէր, այնպէս գեղեցիկ, որ սարերի ձիւնը նրա ձերմակ դէմքի մօտ կապտին էր տալիս, ագուաւէ թեր նրա ծամերի մօտ մոխրագոյն էր թւում, իսկ նռան ծաղիկը գեղնում էր նրա ծիրանագեղ շուր-

թերի մօտ: Երբ նա կռանում էր վշալից մորենու վրայ, նա վարդերով էր ծածկում: Երբ ամառայ տօթին նա լողանում էր ծովում, ալիքները բուրում էին, ինչպէս յամբար ու նարդոս: Տղամարդու հայեացք չէր դիպել նրա դէմքին, հարիւր եռաչեայ և երկու հարիւր միաչեայ հսկաների պահապան էր դրել ահարկու հայրը: Բայց զիփիւը իր հովով թարմացնում էր նրա թշերը և թոչում էր կափաղի գագաթը և նրա գեղեցիկութեան մասին պատմում էր իրան-կարային, բոլոր հողմերի արքային, նաւերի հզօր կործանիչին: Եւ սէրը բորբոքւեց նրա հսկայ կրծքում: Բարձրացաւ Հողմ-արքան իր սե թևերի վրայ և սրարշաւ գնաց դէպի ծովը: Եւ ոչ մի նաև այդ զիփեր չը հասաւ ծովի ափը: Դարաւոր կաղնիներով և մայրենիներով դուրս թափեց Հողմը պահապան դևերի աչքերը, կուրացրեց նրանց աւազով ու քարերով, արքայադստրի պալատի կտուրը պոկեց, լուսաւորեց նրան իր թևերի փայլակով և... մարաւ հրճւանքից ու կրից. արքայադուատրը քնած էր՝ չը տեսնւած, հրաշալի թոչունների փետուրներից շինած անկողնում: (Կրտու, սկսում է զորշկուրել Սուլէյմանին, աւելի եւ աւելի համարձակ): Մազերի մետաքսեայ, սևաթոյը ալիքները ծածկում էին նրա մարգարտեայ մարմինը: Նրա շնչից լեռնային անուշնու խոտերի բուրմունք էր փչում: Եւ կրքից հառաչեց գեղեցիկ Հողմ-արքան, արքայադստրի ծամերը ծածանւեցին, և տեսաւ Հողմ-արքան... (Լսում է զանգակի պարզ բայց երկու ու զողողուն հարածի մի ծայն: Սուլէյմանը բարձրանում է անկողնում յենելով մի թեւի վրայ: Ռուբայան երկիւղով սեղմում է Սուլէյմանի ոտներին: Նրա դէմքին կատաղի բարկութիւն):

Սուլէյման-խան (անարկու ձայնու):—Կարա-իւ-

սուժիք: (Կարա-Խւառութը սարսափով ներս է վագում՝ դէմքը
մեռելապիյն): Այս լուս է:

VIII.

Կարա-Խւառութ:—Մեծ արքայ! Միայն մը հար-
ւած էր! Կաթողիկոսը խւկոյն սուրհանդակներ ու-
ղաբեկց ամեն կողմ: Որ և է մէկը նրանցից ժամա-
նակին չի հասել... Վաղը նրանց Զատիկն է...

Սուշիյան-խան (Անքրով):—Առաւօտեան նու-
ժաղին բեր ինձ կաթողիկոսի գլուխը: Եւ թղղ նրա
գոյնը այնպէս լինի, ինչպէս նրանց զատկի ձուն:
Դուրանում գրւած է—նրանց հետ այնպէս վարւիր,
որ նրանք օրինակ ծառային իրենց յաջորդների
համար, Գնա! (Պառկում է անկողնում, դէպի իրան քարշե-
լով Ռուգայախին): Շարունակիր, Ռուգայա:

Խստախառ (կամաց Զէնաբին):—Սա քսաներորդ
Զատիկն է այսպէս:

Զէնաբ (սկսում է նւազել):—Վերջին Զատիկն է
այսպէս:

Ռուգայա (շարունակելով ներիաթը):—Եւ տեսաւ
գեղեցիկ Հողմարքան...

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո Յ Ր.

Վերջ առաջին արարածի



Ե Ր Կ Ր Ա Ր Պ Գ Ո Ր Ճ Ո Ղ Ո Ւ Ք Ի Ւ Ց Ա Ր Ո

Օրար-թէզի այզին Գույաց մօս, Քոյ ձախ ափին: Բեմի
խորի մի մասը բանած է մի աշաւակի անկինով, որը դուրս
է եկած այզու մէջ լայն պատշաճութի ձեւով՝ մօս չորս աստիհան-
ներով զենից բարձրացած: Պատշաճը յենած է սիմենի վայ,
որոնք միացուծ են կամաներով: Պատերի մէջ երկարէ դրեւր,
պատուհաններ վանդակապատ:—Խորում վարդի եւ յամիկի
ծաղկած բիեր: Բեմի խորի—զետի մրս կողմում երեւացող
Ախաղյալի լեռներն են՝ անսառով ծածկած:—Ազ կողմից ծա-
ռուլի, որի եկաւ կողմի վազեր վեր նիւսելով՝ նրանց են
զոյցրել, որը զնում է դէսի խորը եւ ծուռում զեսի աշ: Համա-
րեա ենա մուտքի մօս—մի ահազին բնկուցենի ծառ՝ փշակալ,
ծառի տակ քախաց ծածկւած գորգերով եւ բարձերով:—Պայծառ,
տողապարտ եեկոյ, մօս 6 մամին:

խփել: Կաթողիկոսը ինքը անձամբ վրայ է հասնում
և զանգակատանից վար քաշում ժամկոչին: Հէնց
այդ ժամանակ վրայ են հասնում չափարները և...

Բէսօ:—Նշանակում է, միայն մի անգամ է
զանգը խփել:

Օքար-բեկ:—Մի անգամ!

Բէսօ:—Եւ դրա համար են սպանել:

Օքար-բեկ (աշխատելով անարկու լինել):—Հապա
լինչպէս:

Բէսօ (գուշիր կախած):—Ո՞չ, ես նրա համար
եմ ասում, որ եթէ կաթողիկոսը պիտի մեռնէր,
այսինքն... այնպէս... մահւանից առաջ զանգահարել
տար բոլոր զանգակները:

Օքար-բեկ (մրանգամից սկսում է բղաւել՝ առանց
քարկութեան):—Ես քեզ շամփուր կանցկացնեմ և խոզի
նման՝ կենդանի կը խորովեմ գովսբած ածուխի
վրայ: Ես քեզ կատուի և շան հետ կըքցեմ մի պարկի
մէջ և ջուրը կը նետեմ:

Բէսօ:—Գոնէ դրանցից մէկը լինի, մեծաշուք
պարոն. կամ կրակը, կամ ջուրը: Սակայն քո
կամքն է:

Օքար-բեկ:—Գինի! (Երկար խմում է):

Բէսօ:—Ասում են, գժւար թէ քո հարկա-
հանները կարողանան մի բեռն ոսկի և երեք բեռն
արծաթ ճարել: Եկեղեցիները վաղուց բոլորը կո-
ղոպաւած են:

Օքար-բեկ:—Իսկ Սուրամի հրէանելը: Նըանք
քիչ ոսկի ու արծաթ ունեն:

Բէսօ:—Բայց և այնպէս, երեք հաւատի չի
բաւականանալ:

Օքար-բեկ (յօնքերը կիտելով):—Ինչ սուտ ես
խօսում, աւանակ!

Օքար-բեկ՝ բազմանոց դէմքով՝ դուրս է զափս տա-
նից:—Նրա յետելից՝ Քէսօն, նրա ծառան, վստան եւ մի
փոքր խարդախ դէմքով.

Օքար-բեկ (անցնում է բարկացած եւ անհանգիստ
դէմքով: Քէսօն կանգնած է անփոյթ դիբրով):—Շան-որդի,
ի՞նչի գատակդ վար չես առնում: Գլուխդ քեզ ձանձ-
րացրել է:

Բէսօ (զատակը վար առնելով):—Շփոթեցի, մեծա-
շուք պարոն: Երբ դու պարսիկ ես—Աստւած ազա-
տէ գլխարկ վար առնելուց, իսկ երբ վրացի ես—
Աստւած ազատէ գլխարկ ծածկելուց:

Օքար-բեկ:—Գինի! տուր! (Նստում է: Թախտի վրայ,
ծասի տակը): Շփոթեցի... Ես ինքս եմ շփոթել!
(Քէսօն վերադառնում է ձնոքին արծաթէ մասուցարան, ու-
րի վրայ արծաթէ կուլա: Օթար-բեկը ուղղակի կուլայով եր-
կար խմում է գինին եւ վրեւով կուլան տալիս է Քէսօնին):

Բէսօ:—Ասում են, թէ Կաթողիկոսին սպանել
են թիֆլիսում, հէնց առաւտաեան ժամերգութիւնից
առաջ:

Օքար-բեկ (մոալլ):—Սպանել են: Թագաւորը
հրամայել էր, որ չը զանգահարեն: Կաթողիկոսը
իսկոյն ամեն տեղ հրամաններ է ուղարկում, իսկ իր
սեփական ժամկոչին մոռանում է հրամայել: Նա էլ
զանգը խփում է—միայն մի անգամ է կարողանում

Բէսսօ:—Ես սուտ չեմ խօսում, մեծաշուք պարոն, ես մատներով կը համրեմ: (Մատները ծալիլով): Մենք նրանց կողոպտում էինք, երբ դեռ խոլամը չէինք ընդունել—մէկ: Թուրքերը կողոպտել են—երկու: Պարսիկները կողոպտում են—երեք: Ուկին հօվարունգ չի, գարնանը չի բանում:

Օքար-բէզ:—Հանաքը իր ժամանակն ունի: Սիրտը մտրած է ուզում, ինչ է:

Բէսսօ:—Մտրակ ուզողը փչանայ: Բայց ես այսպէս եմ դատում իմ յիմար գլխով: Առաջ մենք քերթում էինք նրանց այն պատճառով, որ նրանք մեր Քրիստոսին չարչարել են, բայց հիմա մենք աւելի վատ վարեցինք Նրա հետ,—ուրեմն էլ ի՞նչ պատճառով նրանց քերթենք:

Օքար-բէզ:—Բէսսօ!

Բէսսօ (փատոն):—Այն էլ պարսիկների համար! Նրանք որ ոչ մի իրաւունք չունեն: Թող ջնուգնիրը նրանցից որևէ է մէկին տանջեն ու ապա վերցրու, ի՞նչ ուզում ես:

Օքար-բէզ:—Ո՞ւմ պիտի տանջեն, շռւն!

Բէսսօ:—Թէկուզ դեղնած Սուլէյմանին!

Օքար-բէզ (զարնուրած, յարձակելով նրա վրայ):—Լոիր, անիծեալ! (Սիղմելով նրա քերանը եւ յիտ նայելու): Զէ, ես քեզ կը կախեմ:

Բէսսօ (ազատելով):—Հիմա էլի վեց գեղեցիկ աղջիկ! Մեղանում կային նրանցից, գեղեցկուհիներից, բայց երկար չէին մնում աղջիկ: Իսկ այն ժամանակից յետոյ երբ ես ու դու ընդունեցինք իսլամի լոյսը, մէկ էլ զզը-բաշ բարեկամներ գոյացրինք Քարթալինում, Վրաստանն էլ Դիւրջատան դարձրինք, —ես միայն մի անգամ պատահեցի մի աղ-

ջրկայ, այն էլ աչքը շիլ էր, և ինքն էլ երկու երեխայ ունէր:

Օքար-բէզ (բաքում է):—Օ՛հ, Բէսսօ, քո վերջը վատ պիտի լինի:

Բէսսօ:—Ո՛վ որ ազնիւ ճանապարհով է ապրում, նրա վերջը միշտ վատ է լինում, մեծաշուք պարոն! (Ծառուղուց դուրս է վազում Գայեանչն՝ ծչարփ եւ քրիզով: Նա շատ գեղեցիկ է, վայելակազմ. հագուստը բաց գոնի, արթեկան տարագով. երեսը բաց, փօղը ծածանում է յիտելից):

Դայեանի:—Զես գոնիլ, Մայզօ, չես գոնիլ!

(Քրօջում է): Հայրիկ! (Թափով գրկում է Օթար-բէզին և համբուրում է նրան այն ժամանակ, երբ նա ուզում էր էլի խմիլ):

Օքար-բէզ:—Դու որտեղից գուրս եկար. (Բէսսօ սօյին): Հեռացիր: (Բէսսօն հեռանում է):

Դայեանի:—Հայրիկ, Մայզօն գժւել է: Կպել է ինձ, թէ երեսդ ծածկիր. կարծես ախալցխացի թրբուհի լինեմ: Իմ գուան մօտ դրել են մի ինչ ո՞ր հաստիկ այլանդակի՝ ճղուտացող ձայնով,—ես ուզում էի այգի դուրս գալ նա ձեռքերով ճանապարհու կտրեց և ինչ որ բան էր դուրս տալիս... երկի պարսկերէն էք... խիստ ծիծաղիք էր: Ես ուզում էի նրան մի կողմը հրել, բայց նա այնպիսի ծիծաղելի, այլակերպ դէմք ունէր... ես գժւածի պէս սկսեցի քռքուալ... Ծիծաղից թուլացած ընկայ յատակի վըրայ: Օ՛հ, հիմա էլ չեմ կարողանում առանց ծիծաղիքի յիշել: Քրօջում է):

Օքար-բէզ (աշխատելով խիստ լինել):—Ամօթ չէ քեզ, Գայեանչ, Դու արդէն մեծացել ես... բայց քեզ

այնպէս անպարկեշտ ես պահում... կարծես երեխայ լինես...

Գայեանե։—Հայրիկ, դու մէկ տեսնէիր նրան...
(Շաղրելով՝ ընդօրինակում է ներքինու շարժւածքները և խօսքերը)։ Արա-լա-բա-լա-բա-լա... իսկ թշերը շարժւում են, աչքերը կարծես ճեղքեր լինեն... (Աքերը կլոցում է)։ Արա-լա-բա-լա-բա-լա։ Օ՛հ, Տէր-Աստւած... (Քրջում է; Յանկարծակի լուրջ և զայրացած)։ Եւ այն ժամանակ, երբ ես դեռ քրքջում էի—նա դուռը կողաց։ Երեակայիր քեզ, հայրիկ! Ես դուռը ծեծում էի, բղաւում, բարկանում... Եթէ նա մտնէր ինձ մօտ, ես ցայց կը տայի թէ ինչ է նշանակում դուռը փակն իմ առաջ, իշխանազնունի Գայեանէի առաջ։ (Հպարտութեամբ ինձուուել ճակատը՝ սպառնական նեւով նայում է իր շուրջը։ Օթար-բէզը նայում է նրա վրայ անասեիի փշով և հիացմունքով)։ Ես այնպէս բարկացայ ու տիրեցի, որ քնով անցայ։ Եւ քնեցի-քնեցի... և երազումս տեսայ, որ ես արշաւում եմ այնտեղ, մեր լեռներում, Շինդիում, եղջերուի յետեից... և իրեր թէ եղջերուն բոլորովին արգէն մօտիկ է, և ես հասւահաս եմ, բայց յանկարծ իմ ձիու առաջ բնուում է այդ հաստիկ բաւլա-բա-լա-բա-լան։ Ճիս մի կողմն է նետում, և ես այնպէս ցնցուում եմ... յանկարծ արթնանում և բղաւում եմ.—Հալաշ^{*)})։ բռնիր... Դա իմ սիրելի քերծէն է... Յիշմաւ ես այն սեին։ Դու նրան այնպէս գովում էիր... Նայում եմ, —ոչ Հալաշ կայ, ոչ եղջերու, բայց ինձ մօտ նատած է պառաւ Մայկօն... Ես աչքերս տրորում եմ, բայց ոչինչ չեմ հասկանում։ Իսկ նա սկսում է խրատներ

*) Դան. «Հալաշ» խօսքում երկրադ ապէտ է կակուդ հնէել։

կարդալ։ (Ծաղրելով)։ «Սիրելի աղջիկս, դու հիմա թագուհի պիտի լինես։ Դու հիմա պիտի ծածկած երեսով ման գաս։ Քո հայրը ճրամայել է—դու հիմա պիտի չը վաղվզես, այլ հանդարատ մտն գաս, և դու պիտի տանը նստես, և դու պիտի»... Ես լսեցի, լը-սեցի և մի ուստինով թուայ պատուհանի վրայ։ տեսնում եմ, բարձր է, իսկ պատուհանի առաջ մի մեծ ընկուզենի։ Մայկօն դեռապահ չէր արել, ես ցատկեցի ուղղակի ճիւղերի վրայ և ձայն տւի նը-րան, —հիմա բռնիր։ Ծառից իջայ, ծառուղուց՝ ծառուղի, մէկ թփի յետեից՝ միւսի յետել—այն նա-պատակի նման, որ ուզում է հետքը կորցնել—և եկայ քեզ մօտ։ (Գրկելով նրան)։ Դու ես հրամայել, որ ինձ թոյլ չը թողնեն։ Դու։ Ոչ, անկարելի է! Բայց ինչի՞ է Մայկօն ամում, թէ ես պիտի թագու-հի լինեմ։ Ինչ է պէտք դրա համար։ Շուտով կը լինեմ, Ճիշտ է, որ դու այստեղ թագաւորից մեծ ես։ Ասա, ինչի՞ ես դու բոլոր ժամանակ լուռմ։ Օթար-բէզ։—Դու թագուհի կը լինես, Գայեանէ։ Հզօր թագուհի, ամբողջ աշխարհի հրամանատա-րունի։

Գայեանե։—Ա՛խ, ինչակս լաւ է! Օթար-բէզ։—Միայն թէ դրա համար գու պիտի ինձ լսես, Գայեանէ։ Դու հասած աղջիկ ես և ոչ թէ փոքրիկ տղայ։ Դու պէտք է որսի յետեից, չերքեզի նման, արշաւելու սովորութիւնդ թողնես։ Գայեանե։—Ել ինչի՞ համար թագուհի լինել, եթէ չի կարելի որսի գնալ։ Օթար-բէզ։—Դու դեռ յիմար ես, Գայեանէ։ Ինչի՞ համար! (Յանկարծ սկսում է բղաւել)։ Ես քո հայրն եմ, թէ ոչ։ Այդ քեզ ովէլ է ոովորեցբել իմ ամէն մի խօսքին հարիւր խօսք նետել։ Հայր եմ ես, թէ ոչ։

(Գայեանէն՝ վախեցած, ցնցւելով՝ լայն բացած աջքրով նույում է նրա միայ։ Օթար-բէզը սկսում է աստիճանաւար ցածրացնել ծայնը, որը հասնում է համարեա ճնշւած նեկեանսքի։ Մայկօն ասել է որ ես հրամայել եմ քեզ նստել սենեակում, երեսդ ծածկել, իսկ գմւ.., զու պատուհանից դժւրս ես թռչում։ Դու թռչուն ես, ի՞նչ է, որ ծառերի վրայով թռչում ես։

Գայեանի. (Իրաւացի կիրապով)։—Ո՛չ, ես թռչուն չեմ, բայց տանը փակւած չը պիտի նստեմ. իսկ այս ծածկոցը... սա նրա համար է, որ ես չը կարողանամ շունչ քաշել։ Ես... ես... ահա քեզ ծածկոց! (Պատրուտում է ծածկոցը)։

Օթար-բէզ (Նւարած, ծեռքերով խփում է իր ծնններին)։—Ինչպիսի համարձակութիւն...։

Գայեանի։—Ես մեռած չեմ! Մեռելների երես ներն են դրանով ծածկում։

Օթար-բէզ (աշխատելով խսողէմ լինել, բայց ակամայ հիացմունքով նայելով նրա վրայ)։—Ես կը կապեմ քո տոք ու ձեռքը! Ես կը քցեմ քեզ նկուղը, մկների մէջ։

Գայեանի։—Ի՞նչի. ուղղակի սպանիր ի՞նձ! (Նայում են միմևանց)։

Օթար-բէզ (Երկար լնդմիջումից յիտոյ)։—Դէ, դէ, կերջ տուր կամակորութեանդ։ Մօտ արի... Լսիր ի՞նձ։

Գայեանի. (Չ մօտենալով)։—Ասա։

Օթար-բէզ։—Տեսնում ես, Գայեանէ. դու հարցընում էիր, թէ ճիշտ է, որ ես այստեղ թագուարից մեծ եմ։ Մեծ չեմ, բայց և այնպէս ես ամենազօրեղն եմ մեր իշխաններից։ Ի՞նչի. Որովհետեւ ես միշտ խելացի եմ եղել, ես միշտ աշխատել եմ, որ իմ գրութիւնը լաւ լինի և... և... տեսնում ես,

ինչպէս լաւ է։ Դու յիշում ես այն պապին, Մուլի-րանի Բատօնին։ Ո՞րտեղ է ճիմա այդ ծերունին։ Ապրում է իմերեթում, ուրիշի ողորմութեամբ։ Իսկ որտեղ է Գուլբահաթ Ծիծան։ Գլխատւած է։ Իսկ ուր է Օրբէլեանը, ուր է Սմբատը, Անտուն-անտեղ՝ աւազակութեամբ են պարապւում լեռներում։ Իսկ միւսները. Որը աւերւած է, որը ծառայում է՝ իր կեանըի վրայ դողալով... Ասենը, ես էլ երեխնի... Բայց դա քեզ վերաբերեալ զործ չէ.., Սակայն, երբ ես բարկանամ, կարող եմ ջրախեղդ անել, կախել, գլխատել ամենքին։ Դու կարծում ես, դա քի՞չ է։ Բայց ի՞նչի այդպէս է։ Որովհետեւ ի՞նձ սիրում են թէ թագաւորը և թէ թագուհին։ Թագուհին էլ— ես քեզ նրա մօտ պիտի տանեմ—նա էլ ուրիշների մօտ միշտ երեսը ծածկում է։ Որովհետեւ կնոջ համար երեսը ցոյց տալը ամօթ է։

Գայեանի։—Ի՞նչի ամօթ է։ Մենք ձեզանից աւելի գեղեցիկ ենք։ Զէ որ ձեղ համար ամօթ չէ։ Էլ ինչպիսի գեմքեր ասես, որ չունենաք դուք, օհ, Տէր Յիսուս Քրիստոս!

Օթար-բէզ։—Ի՞նչ է, բոլոր ժամանակ Քրիստոսի մասին։ Ամենքիս Աստևածը մէկ է.., թէ բո... և թէ ամենքի... Ալլահ! Ասմ, Ալլահ!

Գայեանի (Վիրաւորելով)։—Ի՞նչ է, ես թրքուհի եմ, ի՞նչ է։

Օթար-բէզ (Ակսում է բղաւել)։—Դու վարդապէտ ես, ի՞նչ ես, ար զրա մասին զատողութիւններ տաս։ Ինչպէս հրամայում եմ, այնպէս աղօթիր։

Գայեանի։—Դէ, հայրիկ, այդ որ ամենեին չեմ կարող։ Աստևած ամենից մեծ է, նոյն իսկ հօրից էլ մեծ է։ Մայկօփ հարցրնեւ։ Ես քեզ շատ եմ սիրում, դու ի՞նձ ձի էլ ես տւել, քերծէներ էլ և ահա այս

գեղեցիկ հագուստը, և այս մանեալը, և ամեն բան։ Բայց Աստուծոյ մասին Մայկօն քեզանից լաւ գիտէ։

Օրար-բեկ (բղաւում է)։—Ի՞նչ, ինձանից լաւ!... Ո՞վ է ինձանից լաւ!

Գայեանե (անդրտելի)։—Մայկօն։ Նա միշտ ինձ ասում է—տղամարդու գործը պատերազմն է։ Տես, քո հայրը հոչակաւոր զօրապետ է։ Նրանք ժամանակ չունեն աղօթելու։ Իսկ մենք, կանայքս, աղօթում ենք մեզ համար էլ։ Նրանց համար էլ։ Մէկ էլ թափառական Սարբան, նա սուրբ մարդ է, թէև նոյնպէս որսորդ է։ Նա մի հասարակ շուն ունի, բոլորովին հասարակ, բայց կայծակի նման արագավագ։

Օրար-բեկ։—Ո՞րտեղից ես ճանաչում այդ Սարբային։

ը սրերը զնում են պատեանների մէջ եւ միայն սպառնա-
կան ու գաժան հայեացքներ են զնում միմնանց): Զինուր-
ներ և մարդիկ! Իմ ալւոր զլիի վրայ խայտառակու-
թիւն եկաւ: Ոչնք գրսից չէք կարող մուտք գործել
ալստեղ: Մարդասպանը կամ իմ ծառան է, կամ

պահակներից մէկը: (Տրտունջ): Ի՞նձ լսէք! (Ցոյց է, տախո զիսաւոր պահակին, որ մի արար է): Ի՞՞ն-Սատադը ամբողջ գիշերը մի քայլ անգամ չի հեռացել ինձաւնից: Ի՞՞ն-Սատադ! Ահա քեզ իմ մասանին: Արշաւակի գնա Գօրի և շուտով հինգ հարիւր հոգուց բաղկացած մի զօրաբաժին բեր այստեղ (Ի՞՞ն-Սատադը արագութեամբ հեռանում է): Հիմա որոնեցէք մարդասպանին: Եթէ նա չը գտնւի մինչև զօրաբաժնի գոլը, բոլոր այստեղ կանգնածներից, այու տան մէջ բոլոր ապրողներին և թագուհու հետ եկածներին, ամենքին, արևի ծագման ժամանակ, սրի կանցկացնեմ: (Ընդհանուր աղմուկ եւ յուզմունք: Լուսում են հետեւնալ նախադասութիւնները): «Ես իշխանի հետ եի... ես ձիերն եի պահպանում... ես պահպան եի կանգնած... Աստած անիծի մարդասպանին... Խոստվանեցէ՞մ!... Ինչի՞ ամենին կորչենք» (Խոսակցութիւնը աւելի եւ աւելի սաստկանում է):

Դարօ (Վերջին աղմուկի ժամանակ հեռանում է բեմի խորքը, բարձրանում է ցանկապատի վրայ՝ բռնելով ցցից): — Հէյ, մարդիկ! (Ամնեքը դառնում են դէպի նա): Ներքինին առաջուց գնաց Մահմէզին ասելու, որ շուտով իր յետերից կը գայ նաև կատաղի գայլ Սուլէյմանը! Նրան ես ուղարկեցի—Դաթօ Գլախան! Բնենցէք ինձ! (Արագ սատիւնով անհետանում է ցանկապատի յատիւը: Ամնեքը՝ բարձրանայն աղակալին թնկում են նրա յետերից):

Զայնիւր:—Զի՞ն հեծաւ! Հասէք յետերից... (արձակ կում են նրացաններ):

Դարօյի ձայնը (հեռանարան):—Հրացաններդ պարպեցէք կապւածների վրայ, շնէք...

Զայնիւր:—Զի՞նքը! Երեք հոգի արշաւում են յետերից... Նա շատ առաջ է... (հեռաւոր առաթիւն): Քետքիմը ձիուց ընկաւ... Նա գնդակահար արաւ նրան...

Յետ են մնում... Կրկին երեքը... Զը պիտի հասնեն... Օքար-բեկ (կատաղութեամբ):—Հարիւր ոսկի կը տամ նրա գլուխի համար! (Տասը մարդ վաղելով հեռանում են: Նրա հայեացքը բնկնում է Անանիայի եւ Երէկլէի վրա): Բոնեցէք այս երկուսին: (Զննւորներն ու ծառաները յարձակում են Անանիայի եւ Երէկլէի վրայ եւ բռնում են նրան): Ամեն բանի համար դրանք պահինի պատասխաննեն: Կարմրացը եք երկաթը: Հիմնաց իմ յետերից! (Աշոարակի դան մէջ երեսում են Զինարը՝ յմնած առաւ տորփունու վրայ եւ Ծովքայան, որը կպի է յագունուն):

X.

Զեյնար:—Օթար-բէկ! Այս ի՞նչ է նշանակում: (Ամնեքը հանդարտում են):

Օքար-բեկ (Խոնարինելով): — Դաւաճանութիւնը գաղտագողի ներս է մտել իմ տունը, ով թագուհի: Երեք օձեր ներս սողացին ինձ մօտ, խոնարհութեամբ պառկեցին իմ յարկի տակ և մահացու կերպով խայթեցին իմ հիւրին և բարեկամին: Թոյլ տուր ինձ սրանց դատաստանը տեսնեմ, ապա գնա ինձ դատիր: Մէկը փախաւ, բայց երկուսը իմ ձեռքին են: Ես շուտով կը վերադառնամ, իմ թագուհի! Բերէք դըրանց:

Զեյնար:—Կանգնեցէք: Ես ի՞նքս կը քննեմ: (Ճանակին կրէկլէին եւ Անանիային զունատում է): Սրմնը են մարդասպանները:

Օքար-բեկ:—Մը որդին է, ով թագուհի. իսկ այս անպիտանի՝ եղբայրը:

Զեյնար (լութեամբ իշնում է սանդուխով): Նրա եւ բռնւածների մէջ տողը կանգնած է՝ կատաղութիւնից դողուցող՝ Օթար-բէզը: Զորս հոգի բռնած են Անանիային եւ Երէկ-

Եին: Տար-տասներիու հոգուց բաղկացաւ մի խումբ զինւրներ կանչնած են նրանց յիշուեր: Զէնաքի յիշուը—Ռուրայան: Մօտ վեց հոգի բարձրացրել են Աւ-Բարսիսին մարմինը եւ ձեռքերին բանած՝ կանգնած են առանձնն խմբով: Պատուհաններից երեւում են կանանց դէմք'ր):—Ի՞նչ պատճառով սպանեցիք սրան:

Անանիա (ականջ զնելով):—Ո՞չ մի բանում մենք մեղաւոր չենք, մեծաշուք թագուհի! Ո՞չ ես, ոչ որդիս չը զիտէինք էլ, թէ ի՞նչ էր մտադրւել մարդասպան չարագործ! Իմ զժբաղդութեան համար եմ նրան մեծացրել! (Ականջ է զնում):

Զիյնար (խորը սիրո նայում է էրէկէին, բայ խօսում է խիստ ձայնով):—Այ տղայ, դու թնչալէս կարողացար այդպիսի բան անել:

Էրէկլի (նաևով նուրբապին, որը աննկատելի կ'ըստ բացասական նշան է տալիս զիյու):—Ես ոչինչ չը զիտէի, ով թագուհի!

Անանիա: Սրա հետ միասին մենք քնել էինք ձիերի մօտ, ով թագուհի! Հարցրու բոլոր այն մարդկանց, որոնք եղել են գոմում... Յանկարծ աղմուկ ենք լսում... մարդիկ վազում են... Մենք վեր թռանք... Ես հարցրի էլ ամենքին, թէ նրանցից ոչ ոք չի տեսել Դաթօհնն...

Օքար-բեկ (կատաղութեամբ):—Սնւտ ես խօսում, քաւթառ շուն!... Ես ճանաչում եմ քեզ!...

Զիյնար (Օթար-բէզին):—Բավ է համարձակւում թագուհու հետ միասին քննել յանցաւորին:

Օքար-բեկ:—Ներիր, իմ տիրուհի!

Զիյնար:—Մարմինը ներս տարէք տուն: (Մարմինը տանում են: Պահակախմբին եւ ներկայ գոնուղ ուրիշ մարդկանց): Ցրւեցէք ձեր տեղերը: (Ամենքը պրում են բացի Անանիային եւ էրէկէին բոնած յորս հոգուց): Գնամ—

քնիր, նազելի աղջիկ, ոչ ոք այլ ևս չի վրդովիլ քունդ:

Ռուբայա (չուզենալով նեռանալ):—Վախենում եմ առանց քեզ, իմ տիրուհի:

Զիյնար (իշխանաբար):—Գնամ, մանուկս: Գիշերւայ ցողն ու անհանգստութիւնը կը վնասեն գեղեցկութեանդ: Իսկ որպէս զի դու չը վախենաս, քո գոների մօտ պահակ կը կանգնէ: Գնամ!

Ռուբայա (զայրացած նայում է թագուհուն):—Կատարում եմ քո հրամանը, տիրուհի: (Անցնելով էրէկէի մօտով կանգ է առնում եւ բնից ու երգեցի ձայնով ասում է թագուհուն—մի առանձին նշանակութեամբ):—Գու հրամացում ես, որ սրանց հենց հիմա զլիստեն, թագուհի:

Զիյնար (զարմացած ուղղւելով):—Քեզ ի՞նչ հարկաւոր է իմասսալ իմ վճիրը:

Ռուբայա (նւաստաբար):—Գուցէ թագաւորը ինքը ցանկայ ըննել սրանց, ով թագուհի: Ներիր իմ իմար կարծիքը! (Համբուրում է նրա ձեռքը եւ նեռանում է, հայեցը ձգեով էրէկէին):

XI.

Զիյնար (Օթար-բէզին, նայելով էրէկէին):—Ռուքայն ուղիղ է ասում: (Օժաւրութեամբ): Ծղթայեցէք դրանց, բայց մի մազ անգամ չը պակասէ դրանց գլխից: Տարէք! (Անանիային եւ էրէկէին տանում են: Զինարը երկար նայում է նրանց յիշեից եւ նեաղած ընկնում է ծափի տակը զրած թափուի մրա: Օթար-բէզը մրա է հասնում):

Օքար-բեկ:—Մեծաշուք թագուհի, ներիր ի՞նձ: Քո վաղեմի ծառան չը պահպանեց քո հանգստու-

թիւնը: (Գլուխը ցնցում է): Ես արժանի եմ գլխատման և գթութիւն չեմ խնդրում:

Զեյնար:—Եւ ներում մի սպասիր, Օթար-բէգ! Օթար-բէգ:—Մեծաշուք թագուհի, հզօր թագուհի! (Ծունկ է չորում):—Քո ահեղ բարկութիւնը կորստի մատնեց ինձ: Թռղ միայն իմ արիւնը յագեցնէ քո բարկութիւնը! Միայն ինայիր աղջկանս, ով թագուհի: Քո ինչին է պէտք նրա կեանքից զրկելը:

Զեյնար:—Այդպէս, ուրեմն դուսիրում ես նրան: Օթար-բէգ (կցկուր կերպով, տղաւով նրա ոսների առաջ):—Ո՛, թագուհի! Եթէ դու նրա խօսակցութիւնը լսած լինէիր... Ես ինքս էլ չը գիտէի, թէ ինչպէս սիրում եմ նրան... Ինքս վաճառած, անսուակ, Աստծուն մոռացած... Իսկ նրա մէջ է իմ երիտասարդութիւնը, մեծաշուք տիրուհի! Վաղուց էր չէի տեսել նրան—այսօր տեսայ... Ո՛հ, տիրուհի! Մեծաշուք, հզօր թագուհի! Ամեն բան ես տեսել եմ քեզ ու թագաւորին... Ամեն բան մոռացել եմ նրա և քո փառքի ու զօրութեան համար... Ես դաւաճան չեմ, մեծաշուք թագուհի!... Ո՛չ, դաւաճան չեմ: Թռղ միայն ինձ շտնթահար է քո բարկութիւնը—ազատ թռղ նրան! Մի կորցնիր նրան... Միայն ինձ կորցրու! (Հեկեկանրով համրուրում է նրա շոր):

Զեյնար (ուրախութեամբ, բաց զապելով ուրախութիւնը):—Օթար-բէգ! Բայց ավ կը պաշտպանէ նրան քո մահից յետոյ: Ո՞րտեղ կարող է նա փրկութիւն գտնել այն մարդկանց ձեռքից, որոնք վիստում են Վրաստանում, ինչպէս ոչխարի հօտի մէջ ընկած գայլեր:

Օթար-բէգ:—Ես մի հաւատարիմ ծառայ ունիմ: Նա կը տանէ նրան իմերեթ:

Զեյնար:—Դու չէիր, որ այսքանի օրեւս ինձ ասացիր—ինչով են թուրքերը արաբներից կամ պարսիկներից լու: Ո՛չ մի տեղ նա ապաստան չի ունենայ, Օթար-բէգ, ոչ մի տեղ Մի ազատ մարդ չը կայ, մի թիզ ազատ հող չը կայ Կասպիականից սկսած մինչև լայնատարած Սև ծովի ափերը: Ամեն տեղ արիւն և բռնութիւն: Ամեն տեղ իւլամի ոտքը կոփստում է տապալւածների կրծքերը: Ամեն տեղ արցունք և ստրկութիւն: Ամեն տեղ մահ, մուրայց կանութիւն, գերութիւն, տանջանքներ... և ստրկութիւն, ստրկութիւն—սև ու մութ զիշերւայ նման տարածւած ստրկութիւն!

Օթար-բէգ (զարմացած նրա նոր տօնից):—Մեծաշուք թագուհի!...

Զեյնար:—Ո՞ւր է թագուհին: Ո՞ւմ ես այդպէս անսւանում, Օթար!

Օթար-բէգ:—Քեզ, Զեյնար թագուհի!

Զեյնար:—Թագուհին թամարն էր, իսկ ես—ես ստրկուհի եմ և ոչ թէ թագուհի: Ես յիշում եմ Թամարին—նորուատի, հպարտ, չը ծածկած երեսով, Թէյմուրազ թագաւորի լուսագեղ և բերկրալի ընկերունուն! Աստուծոյ ազատ ժողովրդի բերկրանքին! Իմ շուրջը հաւաքւում էին ձեր ազատ դստերքը և կանայք, Վրաստանի իշխաններն ու ազնւականները: Մեր օհնեալ երկների տակ, ստրբ զանգակների զօղանջիւնով, անուշաբոյք այգիների և արգաւանդղաշտերի միջով, մեծ և հանդիսաւոր օրերին մենք ուխտաի էինք գնում մեր հայրենի սրբավայրերը: Պատահած մարդիկ ազատօթէն միանում էին մեղ հետ—և թագաւորն ու թագուհին՝ ազատ ժողովրդի զուիխն անցած գնում էին ազատ ազօթելու ազատ եկեղեցիներում: Եւ ազատ ազատ ու որոտընդուստ երգերով

խնջոյքներ էին տեղի ունենում հայրենական տաճարների պատերի տակ: Եւ սեղանակցում էր թագաւորը ազատ ժողովրդի խրախճանքին, ազատ հողի վրայ, երկնքի յարկի տակ: Եւ մեծ էր, անչափ մեծ էր մեր հանդիսի ապարանքը: Առաստաղը երկնակամարն էր, պատերը՝ անտառապատ լեռները, յատակը՝ մեր զմբուխտէ ըլուցները, իսկ մեր սրբութիւնը՝ հայրենական տաճարները: Եւ ազատ վրացին աղաւորէն որսնում էր ազատ վրացունու աչքը: Առանց երկիւղի մայրերը կրծքերին էին սեղմում իրանց մասուկներին: Առանց երկիւղի՝ հողագործը իր մաճն էր բռնում, հովիսը իր հօտն էր պահպառնում և ամենքը ազատ քաղում էին իրանց այլիների պոտուղները: Եւ Աստւած՝ շրջապատւած էր սրբերով ժպտում էր Վրաստանին և երիշքից օրհնում էր իր հաւատարիմ ժողովրդի ուրախութիւնը, որը իր խաչի միակ պաշտպանն էր՝ ամբողջ անհանք Սրեւերում:—Իսկ հիմն:

Օքառ-բեկ:—Իմ թագումի!

Զեյնար:—Ահա մենք երկուսս նայում ենք միւմեանց, Օթար! Իմ աչքերը լաց լինելու սովորութիւնը թողել են, բայց սովորել են խարել, շողոքորթել և չը քնիլ յուզմունքներից և մտածմունքներից: Իսկ դու—դու, հօր մարտիկ և թէյմուրազի բարեկամ, նվ ևս դու հիմա քո ամբողջ ուժով և իշխանութեամբ: Դու սորուել ես! Սուլէյմանի տէսակէտից դու շուն ես, շուն—պիտանի միայն որս բըռնելու նրա համար, դողալու նրա մտրակի տակ և վազելու նրա ձիու ստների մօտ: Քո բոլոր ծառայութիւնների փոխորէն՝ քեղանից խլում են սիրեցիակ աղջկադ, նետում են նրան օտար աշխարհ՝ մեր հայրենիքի պատունասի մի-երկու գիշերաւ

գւարճութեան համար: Եւ քեզ մահ է սպառնում՝ ուրիշի ձեռքով կատարւած՝ այդ գարշելի արարածիներքինի, սպանութեան համար: Իսկ Վրաստանը! Օթար! Վրաստանը! Նայիր, տես ի՞նչ է շուրջդ: Ասում եմ քեզ—միայն ստրկութիւն, ստրկութիւն, անթափանցելի խաւար, ուս ու մութ գիշերաւ նման: Օթար-բեկ (գուլքը ձեռքերի մէջ անհիւլ):—Թագուհի: Ահ, թագուհի!

Զեյնար:—Իսկ Բա: Գիտես ես ում շղթայել տեի այս բոպէիս: Գիտես ես ում պէտք է շղթայակապ տանեմ Սուլէյմանի մօտ: Գիտես ավ պիտի իմ աչքերի առաջ մեռնի տաժանելի տանջանքներով: Օթար, գիտես... նվ: Իմ որդին!

Օթար-բեկ (ապօձ):—Ի՞նչպէս..., թագուհի... քո որդին:

Զեյնար:—Թան տարի է ես նրան չէի տեսել! Ուրիշի ձեռքն է մեծացրել նրան: Ուրիշի աչքերն էին գիտում, թէ ինչպէս նա մեծանում, աղամարդ է դառնում: Ուրիշի ականջներն էին բուժ նրա ձայնը: Իսկ ես ամբողջ քան տարի շաբունակ չէի համարձակւում գէթ մի անգամ, գէթ հեռակ նայելու նրա վրայ: Եւ այսօր ես առաջին անգամ տեսայ նրան—ու չը համարձակւեցի հակել նրան, ողազել նրան իմ աբցունքով, սեղմել նրան կրծքին! Եւ նրան ասած իմ առաջին խօսքը—դաստապարտութեան խօսք էր, իսկ առաջին գգւանքս—շղթաներ!

Օթար-բեկ:—Բայց նա ի՞նչպէս գրկեց, Թամար! Համայն ժողովարդը գիտէ, որ նա սպանել է!

Զեյնար:—Ցիշիր այս գիշերը ճակատամարտից յետոյ, որի ժամանակ սպանեց Թէյմուրազը, և Վրաստանը ջախջախւեց: Վրաստած, փորբաթիւնինուրների հետ, ոլանալով եկար դու, Օթար, Մե-

թեխի ամրոցը ինձ մօտ՝ յայտնելու ինձ ամռանուս
մահը և մեր պետութեան կորուստը՝ Եւ ընկար իմ
ուների մօտ՝ արիւնաքամ լինելով ահա այս վէրքից:
(Յոց է տալիո Օթար-բէզի երեսի սպին):

Օթար-բէզ:—Մահաշբանչ զարհուրելի՞ օր!

Զիյնար:—Ես կանգնել էի քեզանից վերև,
Օթար, և երեխային սեղմում էի կրծքիս: Մեր զօրքի
վերջին մացորդները ջարգում էին պատերի վրայ
և ընկնում էին մէկը միւսի յետելից: Իսկ Սուլէյմանի
զօրքիրը մորեխի պէս ծածկել էին գետի երկու
կողմն ընկած շրջակայ սարերը, և ծայրը չէր երե-
ւում: Թիֆլիսը վառում էր Մեթեխի ստորանում:
Պատերը դողում էին լաց ու կոծից, հասաշանքից!
Հրդեհների պատճառով լոյս էր օրւայ նման! Գետի
ալիքները արիւնից կարմրել էին: Եւ ընկնում էր
մի պատւարը միւսի յետելից: Թշնամու յաղթական
աղաղակները աւելի և աւելի բարձրագոչ էին դառ-
նում: Երեք մարդ պաշտպանում էինք վերջին ամ-
րութիւնները.—Ես, մանուկ որդիս-կրծքիս վրայ և
ոսներիս մօտ ընկած կիսամեռ վիճուրը դռւ:
(Երկում էլ լուսն ին): Ո՞հ, ես յիշում եմ այդ գիշեր-
ւայ ամեն մի վայրկեանը, կարծես նա կրակով
դրոշմւած է կրծքիս վրայ: Դու ուշքի եկար, նայե-
ցիր իմ աչքերին—յիշում ես, Օթար:

Օթար-բէզ (խորը լուսած):—Յիշում եմ, Թամար!
Ես վերկացայ և աչքերս մթնած՝ պատերից բռնե-
լով լոռութեամբ զնացի մեռնելու քեզ համար: Ել
ինչ պատահեց յետոյ—չեմ յիշում: Երկար օրերից
յետոյ միայն ուշքի եկայ և, Սստած էլ գիտէ,
մարտնչում էի քեզ համար մինչեւ որ տարածւեց այն
սոսկալի լուրը, որ դու... դու, Թամար!...

Զիյնար:—Դարձայ Զէյնար թագուհի, Սուլէյ-

մանի սիրելի կինը: Իմ հայրենիքի և իմ Աստուծոյ
պատիժ!

Օթար-բէզ:—Եւ ես զնացի քո շաւղով:

Զիյնար (բռների նրա հետքը):—Ուրեմն զնան
նրանով մինչև վերջը, Օթար! Գիտես ինչ է եղել
քեզանից յետոյ: Լսիր և դատիր ինձ! Երբ գազանա-
ցած պարսիկները կործանում էին մեր վերջին
պատւարը, Անանիա Գլախան՝ կատու նման մազը-
ցելով գետի վրայ կախած ժայռի վրայով՝ հասաւ
իմ պատւանին: Նրա ձեռքին մի երեխայ կար:
Վսեմ գործ կատարեց այդ րոպէին, Օթար! Վսեմ
գործ! Նա սկսեց լուսաւորել իմ ամբողջ կեանքը,
նա սովորեցրեց ինձ, թէ ի՞նչպէս պէտք է ապրել!

Օթար-բէզ: Ի՞նչ գործ, ով թագուհի:

Զիյնար (տմրոջովին համակած յի ողութիւններով):—
Գլախան ասաց ինձ.—Պարսիկները որոնում են քո
որդուն: Նրանց համար ամենից վտանգաւորը նա է:
Ինձ տնտը նրան: Ես նրան քեզ կը վերադրձնեմ,
երբ օրը համար: Թող իմ որդին մեռնի նրա փոխա-
րէն:—Եւ նա վերցրեց իմ երեխային և անհետացաւ
պատւանից: Իսկ երբ հրոսակները ներս ընկան
և շրջապատեցին ինձ, իմ ձեռքին նրա որդին էր
գտնուում: Եւ գուրս քաշեցին ինձ նրա հետ միասին:
Մեր գաւաճան իշխանները պահումեցին ինձ թա-
գուհու արգուղարդով, ձեռքս տւին մի սովէ մատու-
ցարան՝ մէջը գրած արդին նւաճած ամրոցի բանա-
լիները: Եւ թևերիցո բռնած՝ գուրս հանեցին ինձ
զարբասով և ծունկ չոփեցրին ինձ փաշու մէջ: Ապա
իսեղճ մանկանը կապեցին և դրին ոտքերիս մօտ:
Եւ ձին հեծած՝ մօտեցաւ Սուլէյման թագաւորը՝
արբած իր յաղթութեամբ: Նայեց մանկանը—և ձին

սմբակը դրեց նրա կրծքին: Ո՞հ, այն ճիչը! Վերջին
ճիչը! (ծածկում է լրիսը):

Օքար-թէգ (յուղան):—Աստուծոյ նահատակ!
(լոռութիւն):

Գիշեաբ (ամբողջ լին համակւել է անցլալով):—Իս-
պախաը ծառայում էր ինձ: Միասին ծնւեցին մեր
երեխաները: Եւ հայրը այդ սարսափելի գիշերը
վերցրեց նրան մօր ձեռքից և բերաւ, ինձ տւաւ:
Նրա անունը էրէզլէ էր: Եւ ծիմա այդ անունը
կրում է իմ Գէօրգին: Թշնամիների մէջ կասկած ըլ
յարուցանելու համար՝ իսսախարը մնաց ինձ մօտ.
Թողեց իր տունը, ամուսնուն, միակ որդուն: Անա-
նիայի քոյրը փոխարինեց նրանց մօրը: Մի ամբողջ
տարի չը գիտէի—իրկւել է արդեօք իմ որդին,
թէ նա էլ է սպանւել: Մի տարուց յետոյ իմ հա-
ւատարիմ ծառան ինձ իմացրեց, թէ Գէօրգին կեն-
դանի է: Օթար! Սկսւեցին իմ ամօթանքի, յանցան-
քի և նախատինքի տարիները: Ես ընդունեցի նրանց
անիծեալ հաւատոր: Նրա վստահութիւնը ձեռք բե-
րելու համար՝ ես նրա պէս մէկը դարձայ: Ես պա-
հանջում չի արիւն և հալածանք: Իմ նոր անունը
աւելի սոսկալի դարձաւ իմ հայրենիքում՝ քան նրա
դահճի անունը: Ես գեղեցիկ էի—և իմ՝ գեղեցկու-
թիւնը խաղալիք դարձաւ նրա քմահաճութիւնների
համար: Իմ պատիւը, հպարտութիւնը, սէրը և ար-
քայական վեհութիւնը ես քարշ էի տալիս ցիխի
մէջ, եկուր արարացու ոտքերի մօտ: Ես սովորեցի
խարել—խարել դէմքով, ձայնով, կրքով, իմ ամբողջ
էութեամբ: Անցնում էին տարիները... Եւ կորստեան
էին մատնում իմ հարազատները, բարեկամները,
վաղեմի հաւատարին ծառաները: Եւ ես սովորեցի
Ճը իմայիլ ոչ ոքի: Թէ գութ, թէ սէր և թէ խղճի

տանջանքներ—ամեն բան ինեղեւեց իմ հոգու մէջ:
Ես այլես ոչ ոքի չեմ սիրում—ոչ հաբակատների, ոչ
բարեկամների, ոչ ինքս ինձ... նոյն իսկ որդու:
Ես սիրում եմ միայն ժողովրդին, իմ չարտանջ,
աղքատ ժողովրդին: Նրան եմ զոհել ես իմ արքաւ-
յական և կանացի պատիւը, սրտիս ճշմարտութիւնը,
իմ անմահ հոգու փրկութիւնը! Էլ լուչ կարող էի
տալ նրան:

Օքար-թէգ:—Թամար! Միթէ յարմար ըստէ չը
կար՝ սրախողիսող անելու թշնամու սիրաց:

Գիշեաբ:—Օթար, միթէ լոկ վրէժի համար,
արժէր տալ այն բոլորը, ինչ որ ես տւել եմ: Ես էլ
սկզբից մտածում էի միայն վրէժի մասին: Քանի՛
քանի՛ անգամ նա՝ արքած եմ գգւանքներից՝ աւանց-
գէնքի քնել է իմ կրծքի վրայ! Բաւական էր, որ
ձեռքու մեկնէի, և այդ անիծւած շունը իմ վրէժը կը
յագեցնէր մահաւան ջղածգութիւններով: Բայց միթէ՝
վրէժ, միայն վրէժ պիտի անմէր Վրաստանի թա-
գուհին, նրա օրինաւոր թագաւորի մայրը, չարա-
տանջ ու ծւատւած հայրենիքի գուսարը: Ի՞նչ օգուտ
կը բերէր նրա մահը, Միթէ նա կը փրկէր (մեզ
ստրկութիւնից): Միթէ նահը քի՞չ այգափիսի ծառա-
ներ ունի—էլ աւելի վայրագ, էլ աւելի զարհութելիք:
Ո՞չ ես վրէժի չէի սպասում: Ես սպասում էի այն
օրւան, երբ ենց կը գալ ժողովրդի բարկութիւնը,
երբ նա լեռնային հեղեղատի նման կատաղի յար-
ձանքներ կը տայ, երբ ամեն մի ատրկի մէջ կարթ-
նանայ, վերջապէս, աղատ մարզը! Եւ այդ մարզ-
կանց կառաջնորդէ իմ որդին! Եւ նրան կը շրջա-
պատեն աղատակամ՝ մարտիկները, Եւ ես նրա ուտ-
քերի առաջ զնելով՝ նրա դատաստաճին կենթարկեմ:
իմ մեղքը, իմ նախատինքը, Եւ ահեղ կը լինի նրա

Դրանու մէ համար զի—:(Խոյսը պատու) ուշքով
Հիման բախուր դամասուող ։
Տարածական ։ Համար ։ Վահան ։ Առաջ ։ Առաջ ։
Առաջական գուշակութիւն ։

**Մի նիշ զիմեսան տեսալիներ Թիմիսի մօտ Բեմի ձախ
կողման ներկայացնուած է ամսաւես կեզակ աւանձ գուշ գաղթով
համարակ խաչ պատ ծածկուած մացանեւով է և խամամենի,
տեսակի կուոր համարած է Աչ կորք—դեսի բեմի խութ ըն-
կած է անսամաս մի կիբի զատիփսոյ: Առեմուտնում, ծա-
ռերի միջով, եւելում էն ծիրանեզոյն ամսկեր մայր մանող արելի
սովերով լուսուուած: Երբեմնակի բուռն է նեռաւոր ոռուսունիք,
և ըղուզում է նեռաւոր փայլակը:**

Անանիսին էն Երեկեն՝ զըրայած բնկած էն աւերակների
մէջ: Տասը պահակ՝ փացական ուրեմով առևետնեկ կանգնած
էն՝ հացանեներ կոնակներին: Նամաց մէջ է Գրիգոր: Աւերակնե-
րի մուտքի մօտ, փատակների վրայ, նասած է Թէսոօց: Ժնիների
վրայ զինու տինու, որից նու խմում է է: Նրա առաջ, կանաչ խո-
տի վրայ, փռած է կուպոյ ժօնու խայտանամուկ աղլուխ (բաշկի-
նակ), որի վրայ դրած էն խուռանց, պանիր, սոխ էն կարմիր
ձեւ:

Անինչը զայտա մասու նէ ամ ։ Անգամ նու
Ե զուտքուած նոյ անու սէ քաջամ ։ Ա կայս ըստն
որն ընկանա մամուսոյ մօդու ուրախ ելուսը ։

**Բևսո (երգում է), Գիմիթ Ռուից, Տէս, Ճարում է
Հարեւարակ:**

Մուր զիթէնը լուսանուս ին

Թարեւարակ:

Մրգաւից մենց նոյն իսու,

Հարեւարակ:

Խոկոյն զիթէնը նու արբեցու,

Թարեւարակ:

**Գիգա (սպիտակ մոծ միրուրով մի ծերունի): Զէնդ
Կորքը, յիմարը ի՞նչ ևս քո սրբապիղծ երգերով ճը-
տաւոցդ քցիւ Էստակու:**

**Բևսո (մի բիչ բէֆու): Հէնց որ զօրաբաժնի
մէջ քչացան հինայտած անձոսնի կերպարանքները,
երգը ինքը սկսեց բղիսկը Հէ-հէյյու (երգում է):**

Կտրինն է լոկ զինի կոնծում.

Հարեւարակ:

Խոկ զուրեն ամեն մի անսամեն.

Թարեւարակ:

**Ամեն մի անսամեն և մեր տէրերը—իրանցինե-
րը և ամեն մի անպիտան: Կայծակը զարնէ ուղիւ
նըրանց սափրած գագաթներին! (Խուռամ է):**

**Անանիս (յուզուած նայում է երեղելին): Դու վը-
հաւաեւ ևս, որդի: Գերութիւնը քեզ մաշում է:
Երեկոյ (փունատ, նիմարած, տենդային կրակով յառ-**

ւած աքերով):—Նա իմ սրտի արիւնը ամբողջովին ծծեց, հայր! Ո՞հ, ինչպէս հիմա ինձ հարկաւոր է ազատութիւնը: Դաթօն կորստեան մատնեց մեզ:

Անանիա:—Սուրբ Գէորգը պաշտպանէ նրան: Արիւնը գրգռել էր: Անվեհերութիւնը կուրացըրել էր նրան, և նա ամեն բան մոռացել էր: (Կամաց): Բայց նա մօտիկ է: Նրանից լուր կայ: Երէկ պահակախմբից մէկը փափսաց ականջիս... Նա կազատէ մեզ—հաւատաց ինձ—կազատէ!

Էրէլլէ:—Ե՞րբ. Ե՞րբ: Մենք բոլորովին Թիֆլիսի մօտ ենք հասել... Սա մեր վերջին հանգստանաւըն է:

Անանիա:—Յուսան մինչեւ կախաղան, մինչեւ սուր, էրէլլէ: Յուսան մինչեւ իսկ պարանը ճիտդ ձգած կամ սուրը վրադ բարձրացըրած ժամանակ: Թանի շնչում ես, յուսան:

Էրէլլէ:—Ո՞հ, ինչ տանջանք է! Հիմա շղթայականիպ... Հիմա չը տեսնել... չիմանալ... սակայն մօտիկ է... այսուհետու միայն շղթաներն են արգելում...

Անանիա:—Ի՞նչ ես ասում, էրէլլէ:

Էրէլլէ:—Ես այսօր պիտի ջարդեմ կամ նրանց, կամ իմ գլուխը: Ես չեմ կարող!... չեմ կարող!... Գէթ նայել... մի անգամ տեսնել—և այսուհետեւ թէկուզ մահ, թէկուզ մահ (երեմ ի վար ընկնում է քարին):

Բեսօ (որ բոլոր ժամանակ երգում էր):—Հէյ, պահապաններ և կալանաւորներ! Ես այսուհեղ, ազատ օդի մէջ, ցանկանում եմ, որ ամենքդ էլ ուրախ լինիք: Միւնոյն է: Ամենքիս պիտի կախեն,—որին վաղը, որին ուրբաթ! Ի՞նչի՞ չէք խմում, զւարձանում! (Տեղիցը վսր է կննում իւ տիշորը մեռքին ուղղում է դէպի զիննուան աւերակները: Գիգան լոռութեամբ՝ ուրիշով լ

հրացանը դէպի նա՝ նշան է առնում): Դէ, մի կրակիր, յիմար ալեոր! (Բարկացած տարութերիով տիծորը): Ո՞ւմ ես նշան առնում, հը՛: Գիտես, ով եմ ես: Հարկւր անգամ ինքը, մեր մեծաշուր տէրը, ցանկացել է ինձ կախել, վառել կրակի վրայ կամ ջրախեղդ անել—և ոչ մի անգամ չի կարողացել, իսկ դու ինձ նշան ես առնում: Ես քեզ համար զինի եմ բերում, իսկ դու ինձ նշան ես առնում:

Գիգան:—Մի մօտենայ գերիներին!

Բեսօ (տարպացած, բայց տեղից լը շարժւելով):—Այ, սպասիր մինչեւ վաղը, ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս կարելի է նշան առնել ինձ! Իմ տէրը իրաւունք է ստացել զինի խմելու. ուրիշն ես էլ եմ իրաւունք ստացել զինի խմելու: Իմ տէրը հարկւր զինի է ստացել, ես ինքս կարելի է հարկւրից աւելի ունիմ... միայն ոչ միանգամից, այլ զանազան ժամանակներ... և զանազան տեղեր: Իսկ միասին... ոչ, դա անյարմար է և թանկ է նստում: Իսկ դու նշան ես առնում ինձ:

Անանիա (Գիգային):—Եղբայր, բուկս չորացել է, թոյլ տուր նրան, որ մի կում զինի տայ ինձ:

Գիգան (Թեթեւ նշան անելով զիսով):—Այ դու հարբան, տուր ծերութին, թող խփշտէ—և ապա զնա—հեռացիր:

Բեսօ:—Ըհը, վախեցար! Հապա, եղբայր. Իսկ դու նշան ես առնում: (Վասնում է Անանիային և զինին տկից բամելով մի ոչ ամսան միծ կոտոշի մէջ՝ մէկն զգաստանում է և սկսում է երգել միւնոյն եղանակով):

Հայ լեռներով, անտաներով,

Հարեարակէ

Մերոնք գալիս են խմբերով.
Թարեարակ՝ (կոտոր տաղով նրան)՝
խմիր և օքնիքը Բէսսօթին:
Անանիա (Երէկլէին):—Թարմացրու շրթունքներդ,
որդի!

Երեկի (ըս նաւերով, լուռթեամբ հեռացնում է կոտոչը)՝
թարմացրու Օրելեանի հարաւ կորմից,

Հարեարակ՝
Եւ Սիրատը Սօղանիուից
Թարեարակ՝ :

Դէ, էսպէս աւելի լաւ չէ, այժի միրուք: Իսկ զու
նշան ես առնում! (Երգում է միեւնյան երանակով)

Իսկ մեծ գիտից անդրծովեան
Հարեարակ՝

Մեզ հասնում Յար Մուկովեան.
Թարեարակ՝ ...

(Պահակախումբը եւ Անանիան, միմանց համար աննկատելի
կ'րառով, ուշադրութեամբ լուս են երգու խօսք'րը):

Անանիա (գինին խմում եւ կոտոչը յիս է տալիս
թէսսօին):—Աստւած այսպէս թարմացնէ քո հոգին
վերջին դատաստանին, եղբայր!

Դիգա (նայելով ծախ կորմը):—Շուտ զնա, կորիր!
Թագուհին ու Օթար-բէզը գալիս են այս կորմը:

Բէսսօ (արագութեամբ ցատկելով եւ ամ ն ինչ ժողովելով աղուտիի մէջ):—Մի վախենաք, բարեկամներ, մի
վախենաք! Ես առմենքիդ կարդարացնեմ: (Երգում է
նոյն եղանակով):

Արարատից նենց Նոյն իջու,
Հարեարակ՝

Իսկոյն զինով նա արբեցաւ.
Թարեարակ՝ :

(Հեռանում է դէսի զինուան յևուի կորմը: Աչ կորմից ներս
ն զալիս Զէնաբը, Օթար-բէզը եւ նրան վրացի պահանճեր):

II.

Օթար-բէզ (պահակին):—Գիգա! Շրջապատեցէք
աւերակները և ոչքի չը թողնէք մօտենայ: Թագու-
հին հարցաքնում է յանցաւորներին: (Գիգան եւ միւս-
ները մի քիչ հուսնում են եւ՝ կանգնելով մէջքերը դէսի զի-
նուան (աւերակները) կիսաշրջան են կազմում: Զէնաբն ու
Օթար-բէզը ներս են մտնում: Անանիան եւ Երէկլէն վեր են
կինում՝ շղթաները զրընկ-զրընկացնեով):

Զէնաբ (խորը տանչանքով եւ սիրով նայելով Երէկ-
լէին):—Ի՞նչպէս դու փոխւել ես, խեղճ երեխայ:
Շղթաներդ ծանր են:

Երեկի:—Ոչ: Թագուհի, ոչ թէ շղթաներն են
ծանր, այլ անարդարութիւնը: Ինչի՞ մեզ շղթացած
տանում ես տանջանքների և մահւան պատժի են-
թարկելու: Մենք անկեղծ սրոտով ընծայ ենք բերել
մեր ամենալաւ ձիերը, մեր բոլոր հարստութիւնը:
Միթէ մենք գիտենք, թէ ի՞նչ է պատահել գիշերը:
Եղբայրս զնացել էր ձիերի համար թարմ խոտ բե-
րելու: Ցանկարծ լուս ենք—աղմուկ, աղաղակ, եղ-
բօրս ձայնը,—և մեզ բանում են:

Զէնաբ (կամաց Օթար-բէզին):—Նայիր, ի՞նչպիսի
արքայական բարկութեամբ են վառւած նրա աչքե-
րը! (Որդուն՝ առերևս խառութեամբ): Ի՞նչպէս ես հա-
մարձակում, շղթայւած սորուկը այդպէս խօսել
թագուհու հետ:

Երեկի (նեարդային բուռն յուղմունքով):—Ես ըս-

տրուկ չեմ! Ես ճշմարտութիւնն եմ ասում: Ինչի՞
համար ենք մենք շղթայւած: Ես պիտի ազատ լի-
նեմ! Միենոյն է, դու ինձ չես հասցնիլ բանս կամ
կառափնարան: Ես կը նետւեմ պահակախմբի վրայ,
թող կտոր-կտոր անեն ինձ: Ես պիտի ազատ լինեմ!

Զեյնար:—Դու վախենում ես տանջանքներից
կամ գլխաւելուց: Միթէ մահ և տանջանք քիչ եւ
տեսել մանկութիւնից սկսած:

Էրեկի (սաստիկ յուրած):—Ես ոչնչից չեմ վա-
խենում! Բայց ես ուզում եմ ազատ լինել!

Զեյնար (արցունքն աջերին, արակ, անզուսպ ուժ-
վնութեամբ):—Եւ դու ազատ կը լինես, իմ մանուկ: Օ՛,
Աստւած օրհնէ քո անվեհեր հոգին: Եւ ոչ միայն
դու, այլ ամենքը, որոնք քեզ հետ շղթայւած են ե-
ղել:

Էրեկի (ուրախութիւնից եւ յուրմուրից զոնատ):—
Դու կատակ չես անում, թագումի! Բայց Երբ, Երբ:
Հենց հիմա:

Զեյնար:—Խակոյն, իմ անվեհեր բազէ: Խակոյն,
իմ յոյս ու պարձանք, իմ երջանկութիւն: (Հեկեկառու-
կրկում է նրան): Օթար, տեսնում ես սրան: Ում ա-
րիւնն է կարմրացնում սրա թշերը: Ում կրակն է
վառում սրա աչքերում:

Օթար-բեկ (ուզած):—Տեսնում եմ, ով թագու-
մի: Պատրաստ եմ միոնելու դրա համար:

Էրեկի:—Այս ինչ է նշանակում, հայր!

Անանիա:—Ես Էլ կը մեռնեմ քեզ համար, իս
չողերոցի!

Զեյնար:—Սիրոս ալես չի կարողանում տա-
նիլ, Օթար! Բասն տարի սպասել և բոլորը կատա-
րել մի գիշերում! Քասն տարի կեղծել—և մի ակն-
թարթում բոլոր գաղտնիքների ծածկոցը փրցնել:

Քսան տարի տանջւել և յանկարծ այսպիսի երջան-
կութիւն... Անանիա, Աստւած օրհնէ քեզ, ինչպէս
ես օրհնում եմ! (Երերում է ու նպառում քարի մրաց:
Առութիւն); Բաւական է! Մի գիշերում պէտք է ամեն
բան կատարւի—ուրիշ կերպ ոչինչ չի կատարէի:
Լսեցէք դուք երերդ, թէ ի՞նչ եմ ուզում ես! Անա-
շղթաների բանալիները: (Բանալիները տախա է):

Էրեկի (փափառվ, առնելով բանալին՝ ուզում է զղթա-
ները բանալը: Աւրախութիւնից չնասապատ):—Ո՞չ, թագումի:

Զեյնար:—Թագցրու նրան ծոցումի, անմիտ
աղջա, և լսիք ինձ... Ես և Օթարը պարսիկներին
ուզարկեցինք զանազան կողմէրը, բայց ոչ ամենքին:
Եթէ գէթ մէկը նկատէ ձեր փախուստը—ամեն բան
կոչնչանայ:

Էրեկի (չլարած):—Միթէ պէտք է փախչել:

Զեյնար:—Երիտասարդ, շուտով դու պէտք է
լւիկաչ գես հնազանդւել սովորիլ! Հենց որ սկսենք
շաբժւել, պահակները առաջւայ պէս կը շրջապատեն
ձեզ: Այս երկուաը (ցոյց տալով իր ծետ եկածներին) կը
բռնեն ձեր տեղու: Դուք կը թագնւէք այստեղ, շըդ-
թաները կը հանէք և կը սպասէր, որ ամբողջ զօ-
րաբաժննը անցկենայ: Երբ զօրաբաժննը կանճետա-
նայ աչքեց, իշեք գիտի մօտ: Այնտեղ, ժայռի յե-
տեղ, մի լսատ է սպասում ձեզ: Նրա վրայի մարդ-
կանց անցեք—«Թափառական Ասթրա»: Եւ մի ժա-
մում ջրի հոսանքը կը բերէ ձեզ թիֆլիս:

Էրեկի:—Հա, թիֆլիս... Եւ այնտեղ... ներկա-
յումս ձեզ հետ գտնուղները ամենքը կը լինեն այն-
տեղ:

Զեյնար:—Ում մասին ես, ասում—ամենքը, է-
թէկէլ:

Զեյնար: Այս մասին պատմական նոր միջնավայրութեան

Էրեկի (տեսդու կերպով նայելով նրա աջքերի մէջ):
—Թէ բարեկամ, թէ թշնամի:

Զեյնար:—Ամենքը, իմ մանուեկ! Արեգակը մայր
է մանում: Երկու ժամ յետոյ մենք ամբոցը կը մըտ-
նենք: Օթար, վերջին անգամ, դու երաշխաւո՞ր ես
մեր զօրաբաժնի բոլոր մարդկանց համար:

Օքար-բեգ:—Ինչպէս ինքս ինձ համար, ով թա-
գուհի:

Զեյնար:—Այժմս, էրեկի, քո ձեռքն եմ տալիս
մեր սուրբ հաւատի, Վրաստանի և քո սեղնական
ճակատագիրը! Արդեօք, պատրաստ է քո սիրոց մե-
ծագործութեան համար:

Էրեկի (քը հանկանալով, յուզւած):—Հրամայիր, ով
թագուհի!

Զեյնար:—Այս, դեռ ևս քո թագուհին եմ, բայց
վաղը, վաղը... (յուղունը խեղում է): Իմացէք ամե-
նը, ինչ որ գիտենք ես ու մեր զօրավարը: Սուլէյ-
մանի բնի շուրջը, կիրճերում և քարանձաւներում,
անտառների և թփերի մէջ—համայն Վրաստանից
հաւաքւել են նրա զաւակները: Վաղուց ես պատ-
րաստում էի ամենը—և հիմա ամեն բան կազմ ու
պատրաստ է: Թիֆլիսը օղակով է շրջապատւած, և
մեր մարդիկ դիտում են Սուլէյմանի բոյնը—և ահա
թիւ են այդ գիտող աչքերը, անչափ է նրանց բար-
կութեան հուրը և կատաղութիւնը: Իսկ Թիֆլի-
սում, բերդի և Մեթեխի ժայռի ստորոտում, այս
գիշեր չը պիտի քնչ զէնք բանելու ընդունակ՝ նչ
մի մարդ: Երեք օր սրանից առաջ քո որդի Դաթօն
երեք հաղար երիտասարդներ է հաւաքել Անանու-
րից, Դուշէթից, Ծիլկանից—իսկ հիմա նրանց թիւը
եռապատկւել է: Լեռնային շաւիղներով և կիրճերով,
ոմանք հովիների կամ սայլապանների անւան տակ,

ոմանք գաղտնի, ոմանք յայտնի կերպով: մօտեցան
նրանք հիւսիսից: Գիշերային արշաւանքներով հա-
րաւից մօտեցել են Թիֆլիսին և թագնւած են լեռ-
ներում ու կիրճերում Օրբէլիանի և Սմբատի զօրա-
բաժինները: Արևմուտքից, մեզ հետ միասին, Թիֆ-
լիսին մօտենում են Բօրժոմի և Ախալցիայի լեռ-
ների և սպանւած Ծիծայի կալեածների բնակիչնե-
րը: Ամեն օր Սուլէյմանի հեծիլազօրքը մարդիկ է
ընտառմ—բայց մարդիկ շարունակ գալիս են՝ անձ-
ընի կաթինների նման և անհնկատելի կերպով, աշ-
նան տերենների պէս, շրջապատում են Թիֆլիսը:

Անանիա:—Նրանց սրտերում բարկութիւնը
հասունացել է:

Օքար-բեգ:—Մուխրանը շարժւել է, Թիօնէթից
եկել են: Չայն կայ, թէ Կախեթիցիններն էլ շարժւել
են:

Էրեկի:—Էլ ինչի ենք սպասում: Իսկոյն յար-
ձալիւնը և ամրոցի պարիսպների բարը քարի վրայ
ըլ թղոննը:

Զեյնար:—Ո՞հ, իմ արծիւ, ինչպէս տարածեցիր
թենք! Անհնարին է: Մեր երեք մարդուն գալիս է
մի դաշոյն, հարիւրին՝ մի հրացան, տասին՝ վասօդի:
մի լիցք, —ահա մեր բոլոր զէնքը: Իսկ բերդում...
Դու չես տեսել այն պատերը, նրանց թնդանօթնե-
րը, ամրոցի հորերում և այրերում ամբարած նրանց
բրինձն ու հացանառիկը, դու չը զիտես, թէ վա-
սօդի և զէնքի ինչ մթերանոցներ կան անմատչելի
Մեթեխում: Մենք պաշարել չը զիտենք: Մենք զէնք
չունենք, որ բերդը՝ գրոհ տալով՝ վերցնենք: Մենք
չենք կարող նւաճել ամրոցը՝ սովոր կամ ծարաւու-
թեան ենթարկելով նրան—գետեր են հոսում նրա
մէջ: Մի անզգոյն քայլ—և կորստեան կը մատնեւ

պաշտպաննեմը, և մեր հայրենիքը էլի տասնեակ տարիներով կը ջախջախեիւ—Ոչ, պէտք է հէնց իր բնի, մէջ օծին կախուելի:

Անանիա: Հայց ինչպէս կարելի է այդ անեւ և ավ թագուհիւ:

Զիյնար: Սուլէյմանը չի վախենում ջախջախւած և անգէն ժաղավրդից: Նա վախենում է շահի աչքից ընկնելուց, երեանի ասրազրի ամբաստանու թիւններից, այսպէս և դասերից ու որոզայթներից: Իրանում: Ես կը զբազեցնեմ նրա միտքը՝ պատահած գէպքը պատճելով, ես նրա ուշը կը գրաւեմ շահին աւղարկելիք ընծաներով: Իսկ Օթարը այդ ժամանակ իւրաքանչիւր դարբասի պահակի մօս մեր մարդկանցից կը գնէ, որոնք ապա՝ կը շրջապատեն Սուլէյմանի ասրաբանքը և կը բռնեն բոլոր անցքերը: Մենք նրանց հետ միասին օծի բնակարանը մեր ձեռքում կունենանք, իսկ դու—երէկլէ, դու—իմ որդի, զաւը կը կորզես նրա թունաւոր խայթոցը: Անանիա, դու սրան փրկեցիր, դու էլ սրան կառաջնորդես այս ճանդիսաւոր գիշերին: Ուրիշ ոչ մի ըանով դեռ ևս չեմ կարող քեզ վարձատրել, իմ հաւատարիմ ծառայ!

Անանիա (ուրախութ անց ցնցելով): Հրամայիր, և ավ թագուհիւ:

Զիյնար: Հէնց այն ճանապարհով, որով մանկանը գուրս ասրար, հիմա հզօր, մարտնչողին դէպի Մեթես կառաջնորդես:

Անանիա: Այն, թագուհիւ!

Զիյնար: Սրա ձեռքը պէտք է պայթեցնէ մը թերանցները: Սա հողէն սիւնով կը լուսաւորէ ինչորիչի ճանապարհ, առ իւլու ալբար թշան շահէն մնութեաւատիւ:

Օրարդեզ և Անանիա: Այդպէս է, թագուհիւ, այդպէս է, մեծաշուք թագուհիւ! Զիյնար (խորապէս զպացւած): Ի՞մ մանուկ, Աստած ապաշխարանք ճամարէ այն բոլոր տանջանքները, ինչ որ պէտք է այս գիշեր կրեմ քեզ համար! Անողոք մահից անգամ մայրը խլում է իր հիւած դութիւնից ուժասպառ եղած՝ մանկանը, ես չը պիտի կարողանամ քեզ համար ոյժ և յաղթութիւն հայցել: Քեզ համար քո մայրը աւեց իր պատիմն ու անման հոգին! Բո փոխարէն մեռաւ անմեղ մանուշ կը! Աստած կը պսակէ քեզ արքայական թագով և ձեռող սուր կը տայ՝ իր Խաչի պաշտպանութեան համար—արժանացիր այդ պսակին, քաւիր անմեղ արինը, արդարացրու քո մօրը Աստուծոյ դատապահանի առաջ!

Երեկի (շաբաթ և ճնշւած): Սպասիր... թագուհի... Հայր... Ում ես դու առում: Ո՞վ եմ ես:

Զիյնար (ծնկազը): Դու իմ թագաւորն ես և իմ որդին: Այս շլթաները այսօր քո արքայական զգեստն են: Հէնց որ քո ճակատին թագը կը շողշողայ, ես նրանց ինձ վրայ կառնեմ և շլթայակիր՝ անխոնջ ու անիերջ կաղօթեմ քեզ համար (վիր կմուս): Բայց վաղը ազատ մարդիկ չեն ասիւ թէ ինչի այդ երիտասարդը մեր թագաւորն է: Հայրենիքի հզօր փրկիչը, ինչպէս Աստուծոյ հրեշտակ, կը բարձրանայ հայրական գահը: Եւ քո փառաւոր գործքերը քեզ համար ծիրանի կը լինեն: Եւ ես վաղը կօրհնեմ քո թագաւորութեան սկզբը, ինչպէս հիմա օրհնում եմ քեզ գէպի անեղ ճակատամարտ: (Օրհնում է):

Երեկի (որմանքով համակւած): Ես քո որդին եմ: Ես Վրաստանի թագաւորն եմ: Թագուհիւ: Ո՞հ,

մայր իմ: Ես բոլորը կը կատարեմ; Ինչ ո՞ր դու հը-
րամայեցիր: Շուտով հեռացըք այս շղթաները:—
Ճնշում են ինձ!

Օքար-բեզ (ծունկ ջրելով):—Ներին ինձ, արքայ,
քո դէմ գործած իմ յանցանքները: Նրանց փոխա-
րէն ես այս գիշեր կարժանանամ քեզ իմ ծառայու-
թեամբ:

Անանիա (ծունկ ջրելով):—Եղին ժողովրդի
հայր, ինչպէս ժողովուրդը եղաւ քո հայրը, տէր
արքայ: Պաշտպանիր նրան, ինչպէս իմ որդին
պաշտպանեց քեզ ահեղ ժամին!

Երեկի (դողացրո ձանով):—Ո՛, թող շուտով մնկ-
նեն այս շղթաները! Մայր իմ, հրամայիր շուտով,
ճանապարհ ընկնել... Թագաւոր և շղթայակապ! Ո՛հ,
շուտով, շուտով:

Օքար-բեզ (վիր կինալով):—Խոկոյն, տէր արքայ!
Երեկի:—Ե՞ս—արքայ! Ես! Ես կը խելագարւեմ!

Զեյնար (ակամայ ցնցելով):—Անանիա! Այսօր էլ
սրան պահպանիր ինձ համար, ինչպէս բան տարի
պահպանել ես!

Անանիա:—Կը պահպանեմ, ով թագուհի! Հա-
ւատաք ինձ—կը պահպանեմ!

Զեյնար (արտասուրը սրբելով):—Գնանք, Օթար!
Մնաս բարով, իմ մանուկ! Մնաս բարով իմ արիւն!
Աստած կը պաշտպանէ իր ծառային: (Գնում է):

III.

Օքար-բեզ:—Պահաներ! շրջապատեցէք շղթայ-
ամներին! Գիգա! (Գիգան եւ պահակախումբը մօտենում
էն): Դու սրանց գլխաւորը կը լինես: (Նշանակալոց):
Տղերք, սրանց պահպանեցէք և... չը մոռանաք իմ
հրամանը: Մենք ճանապարհում ենք: (Գնում է բե-

մի յետեւը, մինչդեռ պահակախումը նորից շրջապատում է:
Երէլլէին եւ Անանիային): Հեծէք ձիերդ! Վերջին տա-
րածութիւնն է, որ պիտի անցնենք! (Ամսերը սաստիկ
հաւաքւել են: Մուծը կոխում է: Որոտմանը աւելի եւ աւելի
մօտենում է: Բեմի յետեւը ճանապարհուող զօրքի աղմուկն ու
աղաղակը: Քեմի վրայով բայիմով կամ վազիլով անցնում են
մարդիկ՝ եակնջներով եւ չերկեսկաներ հաված: Կիրճի խոր-
քի աջ կողմից նրանց մէջ է մօնում Ոռութայան—Երկար հա-
վիճով եւ բաշլոր), որը ծածկում է նրա երեսի մը մասը):

Զայներ՝ բեմի յետեւից:—Չիերը հեծէք! Պահակ-
ներ, բեռնարի մօտ անցէք: Թուգունու ձին բերէք!
Օքարի ձալնը իրն-Սաադ! Վերցրու քո մարդկանց և
առաջ գնաց ճանապարհը դիմելու! (Զայները ծուլուա
ւ մի ընդհանուր ժխոր են կազմում, որից ոչինչ չի հասկայ-
ւում: Լաւում են ծիերի տրուփիւն, ասլբաղանների դիմեներ,
զինքի շառացին):

Բեմի վրայ: 1-ն ձայնը բեմի խորից:—Առանց
հեղեղի չը պիտի տեղ հասնենք! 2-րդ ձայն:—Առու-
է իմ ձիու նօխտան: 3-րդ ձայն:—Սօսիկո! ձիս բրո-
նէ, ես ջուր պիտի վերցնեմ: 4-րդ ձայն:—Տոպրակը
շուտով հանիր ձիու գլխից, շանորդի! Բեսօ, (թեմ),
վրայով ձախ կողմից դէպի աջ կողմը անցնելու ժամանակ:
դիպում է Ոռութայալին: Միւենոյն ժամանակ պահակախում-
բը դուրս է տանում գերիներին):

IV.

Բեսօ (տկնորը եւ մի կապոց ձեռքին վրայ է հաս-
նում գէպի նուրայսի կողմը):—Հէյ, բարեկամ! Զէս լը-
սել, Օթար-բէզը հօ չըր կանչում Բէսօին:

Մուխայա (արագութեամբ լսզելով դէպի գինետան ա-
ւերակները):—Ո՛չ!

Օքար-բեզի ձայնը:—Ա՞ռ է Բէսսօն: Հէլ, Բէսսօն! (աղաղակում ևն—«Բէսսօն»):

Բէսսօն (վագիրվ):—Այստեղ է, մեծաշուք պարոն, այստեղ է Բէսսօն! Ամեն տեղ որոնում եմ քեզ! (Ուուրայսն՝ իր մօտով անցկացնելով պահակախւմբը՝ նրանց մօտ խանուում է ամրում):

Գիգան (անարկու ձայնով):—Այ մարդիկ, ճեռացէք, այստեղ գերիներն են (սրով շրջան է գծում): Մի կողմ քաշւեցէք! (Որոտի մի ուժգնն հարւած, խառ մժակում է): Օքար-բեզի ձայնը (թեմի յիտելից):—Գիգան! Գոշիւներ բեմի յետեւը. «Գիգան! Խօսանը կանչում ե»:

Գիգան:—Ես այստեղ եմ, տէք!

Օքար-բեզի ձայնը:—Պահպանիք գերիներին! Գիշերը վրայ է համառում! (Ձայնը հեռանում է: Խուռամ ևն մորակների հարւածների ձայն եւ ծիաւորների զաշիւններ: Բեմի վրայ մի խումբ պահակներ եւ Ռուրայսն):

Գիգան:—Գիլսովս պատասխանատու եմ սրանց համար, տէք! (Ռուրայսն ներս է վագում զինտան աւերակները եւ թագնում է: Աղմուկը ասովիշանաշար հեռանում է հետեւալ տեսարանի ժամանակ):

Գիգան (կիսանայն):—Շղթաները քակել էք: Անանիա (շշնջալով): Թակել ենք:

Գիգան (նոյնպէս շշնջալով):—Պառկեցէք թփերի մէջ: Վերջին շարքերն են անցնում: Շուտ: Սուրբ Գէորգը վրկէ ձեզ! (Բարձր): Սեղմւեցէք գերիների շուրջը: Միացէք զօրաբաժնին! (Խմբով հեռանում է: Բեմը զատարկ է երեսում: Գինետան ձախ կողմը թագներ է Ռուրայսն: Աջ կողմը, կիրճում բած թփերի մէջ, պառկած ևն Գլախան եւ Էրեկլէն: Կուլիսների յիտելից տեղի եւ աւելի թոյլ լուռում է զնացող զօրաբաժնի աղմուկը: Մթնում է: Խուռամ է հեռաւոր, բայց երկարատես ու ուժգին օրոտ):

VI.

Դարօ (դուրս է զալոն թփերի յիտելից եւ մօտենում է թագնուած եղբօրն ու հօրթ):—Հայր...

Գլախան (արագ):—Դարթօ!...

Էրեկլէն (նոյնպէս արագ):—Եզրայր! (Ուուրայսն ու զուրս գոլ, բայց մարդկանց նյատերով, կրկին թաւնում է: Թեթեւ ու խելդրւած միշ արձակելով):

Դարօ (արագ):—Մթքնչաղին աննկատելի կերպով միացայ զօրաբաժնին: Մերոնք ամենքը մէկ-մէկ մօտեցան և շրջապատեցին բերդը.

Գլախան:—Ո՞քան կը լինի նրանց թիւը:

Դարօ:—Թիւ ու համար չը կայ!—ամենքը զայիս են: Ամեն բան թողնում ե զույն են: Օթարն էլ մեր կողմն է! Ի՞նչ օյին պիտի լինի! (Ռուրախ ու մերը ծիծակում է):

Էրեկլէն:—Դու բերդը կը մտնեն:

Դարօ:—Թագուհու զօրաբաժնի հետ... Զեմկարող համրերեւ, սիրոս վառւում է, ուզում եմ մօտ լինեն... Երբ Մեթեիսը պայթեցնեն, մերոնք ներս կը խուժեն: Ո՞վ պիտի պայթեցնէ, չը գիտէք: Էրեկլէն:—Ես ու հայրս:

Դարօ (նախանձով):—Ինձ էլ վերցրէք հետներդ! Անանիա (բարկութեամբ):—Գինակորիք, քանի գեռ կենդանի ես: Դու առանց դրան էլ քիչ մնաց մեղ կորցնէիք, խելառ գլուխ: Ինչի՞նս մէջ խառնուում:

Դարօ:—Գործ կայ, հայր: Ասենք, բերդում էլ գործ կը գանւիք: Մնաք բարով! Պէտք է խառնւիք՝ քանի գեռ չեն գնացել: Կը պատահենք, երբ խաղը սկսուի (վագում է):

VI.

Անանիա:—Արքայորդի, ահա վառօդի պատրոյցը: Ինձ մօտ այդպէս մէկն էլ կայ: Գիգան է իշխանից ստացել և ինձ տեհլ: Թագցրն ծոցումդ: Մօտ հրահան և կայծաքար կմյ, արդեօք:

Էրեկի:—Միշտ քամակիցս կախւած է լինում:

Անանիա (Կամաց):—Աս... Կամաց խօսիր: Աղմուկը հանդարտում է: Յետ մնացած մասդիկ կարող են լինել:

Էրեկի:—Գնանք լաստի մօտ:

Անանիա:—Դեռ վաղ է: Բոլորովին մթնելուց յետոյ պէտք է ճանապարհուել, որ ափից չը նկատեն: Մի ժամ չանցած մենք Թիֆլիս կը հանենք, իսկ զօրաբաժինը երկու ժամից վաղ չի կարող լինել: Բայց հարկաւոր է, որ զօրքը մեղանից առաջ լինի: Լաստի վրայ մարդիկ կը լինեն: Լսիր, քանի երկուսս ենք միայն:

Էրեկի:—Լսում եմ:

Անանիա:—Մենք լաստից կիջնենք. Մեթեխի ժայռի մօտ և լող տալով կը հանենք նրա ստորոտին: Գետի սրբնթաց տեղն է, բայց ես ու դու քանիցս լող տալով անցել ենք Արագան՝ վարարած ժամանակը: Պատրոյցը, կայծաքարը և հրահանը գտակիդ մէջ զի՞ր, որ չը թրջւին:

Էրեկի:—Լսու:

Անանիա:—Ժայռի վրայով մաղլցելով՝ կը բարձրանանք մինչև այն անցքը, որը թփերով է ծածկւած: Երբունիներիցս շատ քչերը գիտենք այդ անցքը՝ նա տանում է գէպի այն ստորեկրեայ այրը, որը գտնում է Մեթեխի տաճարի տակ: Այդ ճանապարհով քեզ դուրս տարայ այն ժամանակ, երբ Սուլէյ-

մանը մտնում էր Թիֆլիս և հետամուտ էր լինում քո մահւան: Հէնց այդ ճանապարհով էլ պէտք է վերադառնանք հիմա, նրա կորստեան գիշերը: Էրեկի:—Եւ ես նրա ձեռքից դուրս կը կորզեմ նրան:

Անանիա (Հարած):—Ո՞ւմ:

Էրեկի (Սթափելով):—Ո՞ւմ: Իմ մօրը!

Անանիա:—Այդպէս է պէտք, արքայորդի! Թէ մօրդ և թէ քո ամբողջ ժողովուրդը: Վաղուց հասել է ժամանակլ! Տանջւեց ժողովուրդը, վերջին ծայր տանջւեց: Հա, լսիր: Պատրոյցը վառելուց յետոյ՝ նոյն անցքով դուրս վազիր: Ես քո յետեից կը հասնեմ: Ասենք, իմ մասին մի էլ մտածիլ: (Դիտելով պատրոյցը): Սա կէս ժամից առաջ չի բոցավառւիլ— այդ ժամանակի կէսն էլ բաւական է, որ մենք վտանգից ազատւենք: Ասա մնաք գետը կը կտրենք— կանցնենք մի փոքր գէպի վար—գետի հոսանքը մեզ վար կը տանէ—այնտեղ կը պատահենք մերսց— Սմբատի կամ Օքբէլեանի զօրաբաժնին: Եւ մենք նրանց հետ միասին ներս կը խուժենք բերդը, հէնց որ օդը կը թռչի նրա գլխաւոր պատարը:

Էրեկի:—Արեգակը դուրս գալուց առաջ՝ նա ինձ հետ կը լինի, այս ձեռքերում! Հայր! Ես կը խելագարւեմ: Կուրծքս պատուում է երջանկութիւնից: Ասա ինձ միայն—թագաւորը... Թագաւորը ում հետ ուղէ կամունանանա:

Անանիա (Ժիծակելով):—Է՛հ, արքայորդի, ափսես, որ այլև էրէկի չես! Միթէ ամուսնութեան մասին խօսելու ժամանումկ է հիմա: Սպամիր մինչև առաւում: Սակայն այդպէս է արխինդ! Քո հանգուցեալ հայրն էլ... Բայց և այնպէս մեռաւ, ինչպէս զինուոր, և կուեց մինչև վերջին կաթիլ արխինը: Բայց պէտք

է ըեղ ասեմ, թաղումին քեզ համար դանուսնացու է ընտրում! Մի այնպիսի գեղեցկունու, ո՞ր... առաջանան ոգ երեկի (անվագ նրա ծեսը), Առևտիդ քառակարտի նկը Անանիա, — Գայեանէին, Օթար-բէզի աղջկանը!

Ե՛, Բնչպէս է: Այսօր թէ մեր և թէ ուրիշի արիւ սով կը հարենք, իսկ յետոյ, Աստած տայ, գինով էլ կը հարբենք թաղաւորի հարսանիքում: Միթէ մեզ չը պիտի ողորմութիւն անեմ, Այսքան տաճա ջանքներից յետոյ չը պիտի աղատ շունչ քաշենք: Միթէ ես չը պիտի պարեմ քո խնջոյքում մեր կող լովի պարը: Կատարութիւն կատարութիւն կատարութիւն էրեկի (աղջած), — Դու Վասում են, ես Գայեան նէին... Օթար-բէզի աղջկան:

Անանիա (խստութեամբ): — Ենիլիր, արքայորդի! Հիմա այդպիսի խորհրդակցութիւնների ժամանակ չէ: Ես մի նայեմ մեր շուրջը և անսնիմ դէպի լսնութ տանող ձանապարհի վրայ յետ մնացած մարդ չը կայ, արգեօք: Այսուեղ սպասիր ինձ և դիմիր չորս կողմէ: Հէնց որ մի փոքրի ծաց լսես, իջիր դէպի գետը: Կը նշանակէ ժամանակէ է և ձանապարհը աղատ է: (Գալուստովի, ամրակի բացիքով անցնում է դէպի պիտիս):

Չը ամ իլլա հայոց այս վայի ցը ամէ համ ացի կործանչը և նախարար սպիտութ հայութայն և երեկի (կանգնած է ծառի ստուբում): Վինիսոն առէ քականիքի մօտ եւ քցիում է ինքն իրան): — Ո՛չ, դա լինեալու չէ... Օթար-բէզի աղջկիը, Գայեանէն, ... Գաթօն ասում էր...

Պուելայն (կամոց): — Երեկի: Անմասն այսուով երեկի (ցնցինի): — Այս Բնչ է: (Նւազում է) Առաջանալու: — Երեկի! Այդ են եմ, Առւքայան հման երեկի (ուրախ, բայց ինտեղած միշտ արհանդիրք առմի 8

քանի ոստիւնով ներուում է դէպի գննետան աւերակները, գրկում է նրան, նայում է երեխին եւ առանց ծայն հանելու անդայ ընկնում է նրա ոտների մօտ):

Առւելայա: — Սթափւիր, ուշքի եկ, էրէկիէ! Ես եմ, Առւքայան եմ! (Համբուրում է նրան: Կա գնցում է և ացերը բանում):

Երեկի: — Ո՛չ, սա զառանցանք չէ!... երազ չէ... գն ես! Դու այստեղ: Ինձ հետ: Ո՛հ, եթէ իմանալիր, թէ այս հինգ օրում ես ինչ եմ անցկացրել! Իսկ հիմա!... Այս գու ես!... այս քո ձեռքիրն են!... քո երեսն է!... Սա քո բուրմիններն է!... այս գու ես! (համբուրում է նրա երեխ, ձեռքերը, ծնկները):

Պուելայն (մէկին ուժով դուրս է արծնում եւ ձեռքը հրամայաբար զնում է նրա վիխի վրայ): — Կանգնիր! Հիմա ամեն մի բոպէն թանկ է: Անա քեզ առայժմ վերջին համբոյրս: (Բուռն կրով երկար համբուրում է նրան: Յետոյ մէկին պոկում է նրանից եւ նայում է նրա ացերին): — Դու հիմա իմն ես: Ես ներս ծծեցի քո հոգին!

Երեկի (երջանկութիւնից խնդր Սոցրածի ալս՝ նայում է նրա աքերի մէջ): — Այս, այս գու ես... գն:

Առւելայա: — Ես ցանկանում եմ, որ դու լնդմիշտ լինես իմը — այդպէս էլ կը լինի: Սուլէյման թագաւորի դէմ գաւագրութիւն է սարքում: Այս քանի օրերս ինձ գերու նման էին պահում: Զը կարողացայ նրա մօտ սուրհանդակ ուղարկել: Եթէ Ալ-Բազիսին սպանելու պէտքը չը լինէր, ես նրա միջոցով կարող էի իմաց տալ: Բայց պէտք էր նրան սպանել: հակառակ դէպօռում ինձ կը սպանէին:

Երեկի: — Օ՛, հիմա ոչ մի բանից մի վախենայ: Դու չը գիտես, թէ ովք է քեզ սիրովը: Ես քո Սուլէյմանին ջարդ ու փշուր կանեմ այս չորացած կափ նման! (կոխկոտում է կաւի բռումը):

Խուժայա:—Դժու (ծիծաղում է մ. բմ ու պրզուր կիրապով): Դու աւելի լաւ գիտես համբուրել՝ քան թէ նա, իսկ մարդ ջարդելում նա աւելի վարպետ է քան դու: Ո՞չ, չը պէտք է նրան ճնշել, այլ ինձ հետ միասին պէտք է փախչել նրա մօտ և խկոյն... Ես բոլոր իմացայ, նրանք ուղում են մտնել քաղաք և դարպաները բանալ ապստամբների առաջ: Ո՞չ, ես նրանցից շուտ կը համեմ այնտեղ—ես եղջերուի նման արագ եմ վագում, իսկ նրանց քարւանը ծանր է շարժւում... Նրանք չեն կարող ճանապարհից դուրս գալ, իսկ ես պիտի միայն այս սարք կը տրեմ:

Էրելի:—Ռուքայա, սպասիր, դու չը գիտես... Քեզ էլ չեն ներս թողնիլ... Մերոնք արգէն ոտք են դրել այնտեղ...

Խուժայա:—Ճշմարիտ: Նոյն իսկ «Թափառական Սարբայի» մարդկանցից! (Ծիծաղում է): Օ՛, Զէյնաբ թագուհի! Դու խորամանկ ես, բայց ես աւելի խորամանկ եմ: Ես խարել եմ քեզ: Ես բոլորը իմացել եմ—ես գաղտնագողի լսել եմ քեզ, երբ դու երկար ու բարակ ճառեր էիր խօսում քո անիծեալ պառաւի հետ: Ես կառուից լսեցի, երբ դաւաճան Օթար-բէզը խօսում էր այն թափառաշրջիկ Սարբայի հետ... Նրանք իմ ձեռքումն են! Նրանք ինձ տարան—բոլորովին հասցըրին բաղաք: Որպէսզի իմ գեղեցկութիւնը չը թառամի, ինձ մենակ նստացըրին սայլի մէջ, որ ոչ ոքի չը կաշառեմ, և շըշապատեցին պատւաւոր պահակախմբով (ծիծաղում է): Ահա, տեսնո՞մ ես Այս բաշլըն ու եսափնջին իմ պահակներից մէկինն է: Նրանք մէկ էլ բերդում պէտք է վրայ-հասու լինին ինձ—ես էլ ճիշց այնտեղ կը դիմաւորեմ նրանց: Նրանք ուղում են ներս մտնել և ներս կը մտնեն,

Քայլց նրանց կտոր-կտոր են անելու—ամենքին, ամենքին! Իսկ թագուհուն—օ, նրան առանձին պատիւ է պէտք: Ես ոտքով պէտք է կոխոտեմ նրա հաղարտ աչքերը: Եւ նա այս ոտքի տակ պիտի շընչասպառ լինի: Ի՞նչ պատահեց քեզ:

Էրելի: (մոռելալին գոյնով, ապուշ հայեացքով նայում է նրան):—Ո՞չ, Ռուքայա, դու չը գիտես...

Խուժայա:—Ի՞նչ չը գիտեմ: Ես մի բան գիտեմ միայն, որ պատահել եմ քեզ, այն էլ աղատուած: Ես ուղղակի կը փախչէի, բայց քեզ էի որոնում... Լսում ես: Ես քեզ այնտեղ կազատէի, բայց—հիմա աւելի լաւ է... Ես բուռն կերպով ուղում էի նայել քեզ... Իսկ հիմա... Մենք երկուս կը վագնք թագաւորի մօտ: Ես կասեմ, որ զնւ օգնեցիր ինձ փախչելու, որ դաւաճանները քեզ բռնել էին այն պատճառով, որ դու հաւատարիմ ես իրան—և այդ հաւատարմութիւնը դու գործով կապացուցանես: Նա կը վարձատրէ քեզ, իսկ ես թագուհի կը դառնամ և կը սիրեմ ու կը բարձրացնեմ քեզ: Փախչենք! Նրանք ճանապարհի կէմն էլ անցած չեն լինել երբ մենք արգէն տեղ հասած կը լինենք: Հիմա իսկ ժամանակն է: (Վափելով բարձրանում է գինետան պատի վրայ և նայում է նոռուն): Զօրարածինը իջնում է... Հրէն, գալարւում է սե ու երկար զծի նման... Օ՛, ես տեսնում եմ, ինչպէս կատու, և լսում եմ, թէ ինչպէս է խոտը աճում (ծիծաղում է իր սովորական ձեւով): Գնացէք, գնացէք... Ես կը զիմաւորեմ ձեզ... (Թափով նետելով՝ փարում է երէկելին): Օ՛, ինչպէս մենք երջանիկ պիտի լինենք: Ահա քեզ էլի գրաւական (համբուրում է նրան և բրջում է): Նրանք տանում են Ռուքայային: Հա-հա-հա! Հիւանդ Ռուքայային... Հա-հա-հա! Պահակների հսկողութեամբ... Երկի թա-

գուհին դարպասի մօտ սայլի վաշագոյրը կը բարձրացնէ և կասէ. (ընդօրինակիլով չալրում է թագուհուն) — հիմա լաւ ես, գեղեցկուհի:—Օ՛, մի նայէի նբանայն բովէին, երբ նա կը տեսնէ դատարկ վանդակը! Ուշ է! Դէ, սլանանք՝ թռչունների նման: Ես բոլոր շաւիդները գիտեմ... Սլանանք երջանկութեան յետից... Զը մոռանաս—«Թափառական Սաբրաշչա, հա, հա, հա, (Քաջում է նրան): Դու վախենում ես դալ:

Երեկի:—Կանգնիք, Ռուքայա!.. Անկարելի է... անկարելի...

Խուբայ (զարմացած):—Ի՞նչն է անկարելի:.. Երեկի:—Դու չը գիտես, թէ ով եմ ես և ի՞նչ պիտի անեմ... Դու չը գիտես, թէ ում ես ուզում կորստեան մատնել!.. Նա իմ մայրն է, Ռուքայ!

Խուբայ:—Ի՞նչ Դու զառանցմամ ես! Երեկի (ուժգին եւ բուռն կերպով):—Ո՛չ, Ռուքայ! Այդ Սուլէյման թագաւորը սպանել է իմ հօրը... ուզեցել է ինձ էլ սպանել... ինձ տղատել է Գլախան... այդ ծերունին... իմ հայրը թագաւոր է եղել:.. Ինքը թագունին, ինքը Օթար-րէզը և ծերունին... Քիչ առաջ ծունկ էին չոքել իմ առաջ... բոլորը պատրաստ են... Ռուքայա, բոլորը! Ես այսօր պէտք է պայթեցնեմ Մեթեսի մթերանոցները... իմ մարդիկը ներս կը թափւին կործանւած բերդը, և քո թագաւորը կորստեան կը մատնեի իր ամրող զօրքով: Ես կը բարձրանամ իմ հայրենի գահը—և քեզ մօտ կը բազմեցնեմ...

Խուբայ (արթած նայելով նրան):—Դու խելագարւել ես!

Երեկի:—Ո՛չ, հոգոյն հատոր! Ո՛չ, իմ պայծառը երբ իմացայ, թէ ով եմ ես, իմ առաջին

մտածմունքը քո մասին եղաւ: Նրանք Օթար-րէզի աղջկայ հետ են ուզում ամուսնացնելինձ: Ի՞նչ կուբայ (նախանձի ու ովու ակամոյ միւս):—Ա՛յ Երեկի:... Բայց ով կը համարձակւի հրամայել թագաւորին: Քեզ համար պէտի թագը իմ գլուխն թագաւորի առաջ կը խոնարհի իմ ամշող թագաւորութիւնը՝ ինձ հետ միասին: Ուրիշակայաց:—Սպասիք!.. (ոճմիքը վրա ըերեսը սաստիկ մոտածում է): Քեզ պէս երեխայր, և թագաւոր: Եւ Զէյնար թագուհին քեզ վերահսկով: Հապն ես... (Քըրօնամ է):

Երեկի:—Մի ծիծակիւ Ռուքայ! Ես երեխայ չեմ—դու չը գիտես իմ ոյժը! Խուբայ (արագ):—Քեզ խարել են! Դու երեխայ եաց քեզ խարել են! Դու թագաւոր! Միթէ թագաւորներին մահան գիրկն են ուզարկում! Դու նրա որդին ես: Միթէ մարը իր որդուն մի ամբողջ շաբաթ կը պահէ շրթայակապ: Միթէ մարը կը թողնէ, որ իր որդին կորստեան մատնի ժայռեմի բեկորների տակ:

Երեկի (վարանմանի մէջ, միմնարվութիւնում):—Ո՛չ... ով... Անանիան գալիս է ինձ հետ: Նա սիրում է ինձ...

Խուբայ:—Դու արգէն ասացիր, ով նրա որդին չես էլ ինչի՞ պիտի նա ցաւէ քո մասին: Նրա հարազատ որդին փախաւ, իսկ քեզ բանեցին: Երեկի:—Բայց չէ որ նա իմ մարդասպանուշ թիւնը իր վրայ առաւ:..

Խուբայ:—Եւ փախաւ, իսկ քեզ բանեցին: Իսկ հիմա քո հոգեհայրը կը թողնէ, որ գոյ պայթեցնես ամրոցը, ինքը կը փախչի, իսկ ուռ կտոր-կտոր հածած վեր կը թռչես օդի մէջ: Հէսց դըա համար էլ

քեզ պատրաստել են... Դու հեմ ես պէտք: Ո՞վ է սիրում քեզ: Միայն ես! (Համբուրում է նրան: Յանկարձակի): Սպասիր! ուրեմն դռւ ես նա! Քո մասին էին խօսում Օթար-բէզն ու թագուհին:

Էրելի (շփոթած):—Ի՞նչ էին խօսում:

Խուբայս:—Այն, ինչ որ հիմա միայն հասկացայ! Սպասիր! Թողող մտարերեմ! (Իրեւ աշխատում է մտարերի): «Այն ընկեցիկը կը պարեցնե՛ Մերեխը»...

Էրելի (շնուրով):—Ընկեցի՞կը!

